



35893

2nd ed.

Արամ Երեմեան

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Ա.

ԲԱՂԵՐ ՕՂԼԻ

Բ.

ՂՈՒԼ ԱՐԶՈՒՆԻ

Գ.

ՂՈՒԼ ՍԱՐԳԻՍ ՇՐԻՇԿԱՆՑԻ

Դ.

ՄԻՍԿԻՆ ԱՏԵՓՈՆ

35293

Գ.

ՓԵՐԱՆԿՆԵՐ

Աշուղական գրականութիւնից

Գ

ՆՈՐ—ՋՈՐ

Տպարան Ս. Ամենափրկչ

1921

Արամ Երեմյան

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Ա.

ՔԱՂԵՐ ՕՂԼԻ

Բ.

ՂՈՒՆ ԱՐՋՈՒՆԻ

Գ.

ՂՈՒՆ ՍԱՐԿԻՍ ՇՐԻՇԿԱՆՑԻ

Դ.

ՄԻՍԿԻՆ ՍՏԵՓԱՆ

Ե

Զ.

ՓԵՐԱՆԻՆԵՐ

Առաջին գրականություն



ՆԱՐ—ՀՈՒՆ

Տպարան Ս. Ամենափրկչեան

1921

ԱԻՑ ԵՌՎԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ԶՈՒՂԱ

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Ս Ս ՈՒ Թ Ի Ն

Արամ Երեմեան «Առաջ Յարթուն օղի»
Փետմենե առաջական գրականութիւնից
Գինն է 4 ղոան, Իսֆահան.

Աշուղութիւնը շատ էին ծագում ունի հայերի մէջ, Հին, հե-
թանոսական շրջաններում, երբ հայ ազգը չունէր գիր և գրակա-
նութիւն՝ ժողովրդական երգիչ-բանաստեղծներն (գուսաններն)
էին, որ քաղաքից քաղաք, քաւառից քաւառ շրջելով՝ ծանօթացը-
նում էին հայ ժողովրդին իրենց ցաւերը և վշտերը այլևայլ մո-
տիւններով:

Նրանք մեծ յարգանք էին վայելում ժողովրդից և ժողովուրդը
սիրում էր նրանց երգերը և երգում: Սակայն գիր չլինելու պատ-
ճառով աղաւաղումի էին ենթարկւում կամ իռպառ ոչնչանում:

Իսֆահանում լոյս տեսած «Աշուղ Յարթուն օղի» գիրքը
կորստից ազատում է մեր ժողովրդական երգիչներից մէկին ևս:

Հեղինակը ցաւ է յայտնում, մինչև այժմ, Պարսկաստանի
փերիա և Զարմահալ գաւառների աշուղների մասին հետազոտու-
թիւնների չգոյութեան մասին և խոստանում է յայտնագործել մի
քանի աշուղներ:

Երգերը բաժանւած են բաժինների՝ սիրային, պանդխտի, կը-
րօնական, խրատական ևայլն, որոնք Վրացականում եղել են խառ-
նիխումն և բացի դրանից մի քանի երգեր չեն եղել դաժնարում,
որոնք հաւաքողը գտել է մեծ դժւարութեամբ: Երգերի լեզուն բա-
ւական պարզ և սահուն է, բայց կան թրքերէն, պարսկերէն և
գաւառաբարբառներ՝ որոնք խոտացնում են գրւածը և անհե-
շալի դարձնում: Գրքի վերջում գտնուող բառարանը օգնում է
կանալու գործում: պ. Արամ Երեմեանի այդ ծառայու-
նատիւն է և խրախուսական:

«Առաւօտ»
1920 տ. № 6

Քանկագին մօտ՝

Մաքուհի Երեմեանի

Անհուաց յիշատակին:

ԱՇՈՒՂ ԲԱՂԵՐ ՕՂԼԻ

Կեանքը: Զուգահայ աշուղներից ամենահինը և ամենանշա-
նաւորը Բաղէր օղլին է: Իսկական անունն է Բաղրամ Զակաւակ-
մեր յանկութեան, այս երգչի մասին էլ մի կենսագրական տեղե-
կութիւն չկարողացանք գտնել, միայն այսքանը յայտնի է, որ նա
ծնւել է Նոր—Զուղայում, մօտաւորապէս 1705—10 թւերին. կրթ-
ւել է Նոր—Զուղա եկող աշուղներից մէկի մօտ, ապա աշուղական
շնորհք ստանալու համար գնացել է Մուշ—ս. Կարապետ ուխ-
տի և այնուհետեւ ձեռք առնելով չօնգուսը, նրբեր և եղանակներ է
հեղինակել և իրեն նւիրել աշուղութեան:

Նա իր ժամանակակիցներից մեծ յարգանք է վայելել:

Երգերը: Բաղէր օղլին թողել է բազմաթիւ բարոյական,
խրատական, սիրային, երգիծական և այլ երգեր, որոնցից սակայն
շատերը, զժբաղդաբար, կորել են. մեր ձեռքը հասել են հազիւ 18
քերթւածներ, որոնք ցոյց են տալիս, որ նա ունեցել է քեր-
թողական շնորհք և որոնց ներքին բովանդակութիւնից կարելի է
գաղափար կազմել երգչի հայեացքների և մտորումների մասին:

Այդ երգերից առանձնապէս նշանաւոր են երկու տաղերը,
մինը՝ «Խաղ վասն հարսահաւուրեան Նաղեր—Շանի», իսկ միւսը՝
«Խաղ վասն ցեղութեան Զուղայում», որոնց մէջ երգիչը նկա-
դրում է ԺԸ. դարի Զուղահայ ժողովրդի դառն կեանքը: Բա-
նաղէր—Շահի ձեռքից նրանց քաջած անուր յաւերն ու
պանքները, անասլի հարստահարութիւններն ու բո-
որոնց մէջ ինքն ապրել է, երգերի նիւթ է շինուել
մի քանի խօսք նախ այդ դարեղջրջանի քաղաքական

ԺԸ. դարի բալաֆական անցքերը: Բաղէրն
գարում, այնպիսի մի ժամանակ, երբ Պարսկա-Օսմա-
ւանական կռիւները պարսից երկրում անպակաս էին
հետեանքով Պարսկաստանը քաղաքականապէս թուլացել էր,
կաւոր էր մի զօրեղ ձեռք, մի աննկուն ուժ, որ վերականգն-
ւելիս Պարսկաստանը, եւ ահա ասպարէզ է գալիս պարսից պատ-

մութեան մէջ մի նոր զօրագլուխ, որ շնորհիւ իր ոստանական ընդունակութիւններին և քաղաքական հետազոտութեան՝ կարողանում է Պարսկաստանի քաղաքական դրութիւնը բարեփոխել: Դա Քան-Պաշա-Պաշա-Պաշա է, որ սկզբում հասարակ մի աւագակապետ էր և ասպատակութիւններ էր գործում Խորասանի անապատներում, բայց յետոյ ծառայութեան է մտնում Շահ-Քան-Պաշա մօտ և կարճ ժամանակամիջոցում զօրապետ և ապա ընդհանուր սպա-բապետ է դառնում: Վերջը Շահ-Քան-Պաշան սպանել է տալիս և նրա վեցամսեայ Արաս որդու մահից յետոյ, 1836 թւին, Մուղանի դաշտում աւագանիների մի ժողով գումարելով՝ իրեն Շահ է ընտրել տալիս և կոչում է Նադէր-Շահ:

Նադէրը՝ նախ մաքրում է Պարսկաստանն Աղւաններից և միանգամայն յաղթում է և ճնշում Օսմանցիների ոյժը. ապա Սպահանից գնում է Դանդանար և այնտեղից էլ յարձակում է Հնդկիստանի վրայ, տիրում է Հնդկաստանի մի մասին և մեծամեծ գումարներով, 1739 թւին վերադառնում է Պարսկաստան, որից յետոյ, 1746 թւին, իր սուրը նորից դարձնում Օսմանցիների դէմ և բոլորովին յետ է մղում նրանց, որով Հայաստանի արեւելեան մասը, մինչև երևանն ու Նախիջևանը նորից անցնում է Պարսիկների ձեռքը:

Սակայն հայերը, նամանաւանդ Ջուղահայերը, մեծապէս տուժում են Նադէր-Շահի թագաւորութիւնից: Նա ընչաքաղցութիւնից կուրացած, աշխատում է պետական և զինւորական ծախսերը ձեռք բերել հարուստ Ջուղահայերից. այդ նպատակով նա շարունակ հալածում է ծանր հարկերով ճնշում է ժողովրդին, պահանջելով նրանցից իւրաքանչիւր տարի 10,000 թուման կանխիկ փող, որը հաւաքելու գործը յանձնում է իր զինւորներին, որոնք հայերի տներից ներս, անասելի բռնութիւններ են գործում: Եւ ինչպէս որ սարսափ տարածում է Նադէրը այդպիսի 747 թւականը, առնում է հայերից 45,000 թուման: Ջուղահայերի հարուստ վաճառականներից պահանջում է 500 թուման փող և այդ ծրագիրը յանձնում է թոռապետ Մահմադ-Ռզա-բէկին. սա ևս Նադէրի և դաժան մի մարդ էր. գալիս է Նոր-Ջուղա ժողովրդին անասելի հարստահարութիւնների ենթարկելով: Հայ իշխաններին խորհուրեամբ հրաւիրում է իր արկում և իբրև փրկանք մեծագումար ոսկի և արծաթ խնայելու: Փախչող իշխանների կանանց կապում է և հրապարակում, խարոյի վրայ, ստիճներն այրում և նրանց որդիներին

էլ խոշտանգում է, որպէսզի իրենց ամուսինների թագցրած փոշերի տեղերը ցոյց տան: Իսկ փախչող իշխաններից շատերին գրտնելով՝ ձեռքերի և ոտների եղունգների մէջ սրածայր եղէգներ է մտնում և յարդի ծխով շնչառառ անում: Ահա այսպիսի տանջանքներով դաժան Մահմադ-Ռզա-բէկը, մի ամսեայ ընթացքում առնում է հայ իշխաններից 23,500 թուման կանխիկ փող:

Այս հարստահարութիւնների հետեանքն այն է լինում, որ ժողովուրդը քայքայւում է տնտեսապէս և մի զարհուրելի սով է ընկնում Նոր-Ջուղայում, որի հետեանքով շատերը թողնում են Նոր-Ջուղան և գաղթում գէսի Ռուսաստան, Հնդկաստան և այլ վայրեր:

Սակայն Նադէր-Շահի թագաւորութիւնը երկար չի տևում. Մահմադ-Սալահ-բէկը և չորս զինւորական պաշտօնեաներ դաւադրութիւն են կազմում նրա կեանքի դէմ. նրանք զիջելով մտնում են թագաւորի վրանը և կտրում Նադէրի գլուխը:

Պատմական երգեր. Ահա ժամանակակից յուզիչ այդ դէպքերի պատկերն է, որ տալիս է մեզ Բադէր օղլին իր երկու ոտանաւորներով, որոնց մասին դադափար տալու համար, առաջ ենք բերում այստեղ մի քանի նմուշներ.

«Աստուած դու մեզ մի նաւ արա,
Շահը քամամ աօխարն ա ուզում.
Երկիր քանդում վարայ, վարայ,
Ողջ դգար, դգար ա ուզում»:

Այսպէս՝ երգիչը դիմում է Աստծուն և մի «նաւ» խնդրում, բռնակալ Նադէր-Շահից ազատելու համար, որը ցանկանում է տիրել ամբողջ աշխարհին և այդ նպատակով «վարայ, վարայ» երկիր է քանդում ու՝

«Խուճաւարին քաւանդ անում,
Արգ անողին սպանում.
Ամեն գեղից մի դուլ օսնում,
Դի մի նօֆար ա ուզում»:

Կամ՝

«Քեալանքարներին բերում ա,
Թող ու չոր մի տեղ երում ա».

Այս տեսակ անտանելի բռնութիւնների և հարստահարութիւնների հետեանքով՝ երկրում ընկնում է անասելի թանգութիւն և ժողովուրդն այլևս չսուլուկ է ուտում, որով մեռնում են շա-

տերը, բայց ոչ տէրտէր կայ, ոչ էլ բուռն, որ թողէ մեռելն-
քին, բոլորն էլ փախել են և թաղուել. իսկ մեռելներին շնորհ են
ուտում,

«Սուլուկ կեանք, ընդու մեր շունչ պարգեց,
Շատ մաքր մեռաւ՝ շունն կեռաւ, չքաղվեց.
Տեղեւորներն փախան՝ մուղղսին գաղվեց.
Դառ կանչեց Դաբրիէլ, Մուէլ հրեւոսակն»:

Այնուհետեւ երգիչը պատմում է Նադէր-Նահի սպանութիւ-
նը և նկարագրում Զուղայի դրութիւնը.

«Նադէր-Նահին սպանեցին,
Ասացին վերացաւ աշխարհի շարքն.
Նոր Աղէլ շահ անուանեցին,
Ասացին դիշվեց Էս աշխարքն:
Շունչ ու մաքարն մեզնից վերացաւ,
Ով շողկամ բերեց, փող բառցաւ.
Խացն ուրն ապասի գառձաւ,
— Բիսի գազարն»:

Խրատական — բարոյական: Բացի սրանցից՝ Բաղէր օղլին թո-
ղել է նաև մի քանի հատ էլ խրատական-բարոյական երգեր. դը-
րանցով երգիչն իբրև բարի ծերունի և իբրև ճշմարիտ հաւատա-
ցեալ-քրիստոնեայ՝ խրատում է Աղամորդուն իր Ստեղծողին միտ
բերել և միշտ՝ գիշեր, ցերեկ ծնրադիր փառք տալ և «Հայր մեղայ,
Տէր ողորմեա, Տէր յիշեա՛ւ ասելով՝ Ժամ դնալ և աղօթել, որպէսդի
Տէրն ամէն ժամանակ պահապան լինի.

«Աղամայ որդի, Էս Ստեղծողին միտ բեր,
Դիւեր, ցերեկ փառքն տու համբայ.
Փառք տու Աստուծոն, ասա՛ Հայր մեղայ,
Չոքի՛ր ասա՛ Տէր ողորմեա՛, Տէր յիշեա՛ւ,
Տէր յիշեա՛ւ ասա՛ զնա ժամի դուռ,
Ար յամենայն ժամանակ Էնդ Բոմակ Ելնի կուռ»:

Դրում է երգիչը «լոյս հաւատից» յետ չի դառնալ,
ամբ կըպահի իր հաւատն, ասում է նա, «մեր Տէրն
տ ու բարիչ ա», իսկ՝

«Ուն խտուրն որ խաւս ա, հրազն վառ ա:
Ուն գործն բարի ա, անարաւս գառ ա»:

Այնուհետեւ երգիչը, ծերութեան օրերում աշխարհիս ունայնու-
թիւնն ու մահը միտ բերելով՝ ջերմեռանդութեան է դիմում և ինքն
իրեն խրատում.

«Ե՛կ իմ անդադար սիրս՝ Բեզի տամ օգուտ,
Դիւեր, ցերեկ Էս փառքն տու համբայ.
Փառք տու Աստուծոյ, ա՛ռ ողորմութիւնն,
Դիւստ պահի՛ր Էս տար բղբաւ յունքն»:

Երգիչն իրենով ուրիշներին խրատելու նպատակով, իր սեպ-
հական իմաստութիւնից և փորձառութիւնից առաջ է բերում բազ-
մաթիւ խրատական մտքեր և դատողութիւններ, այսպէս՝

«Զօռաբն ճամադդին չի՛ տղամարդինն ա,
Չունքի ինքն իւր եղբար ու շարքին ա.
Իմանողի Բոսին խաֆաբն մին ա,
Չըծակես դանակով, չըսաւ Բաղարով»:
Դամ՝
«Առանց համբերութեան դու բուն մի՛ առել,
Օտար ձեռնով Էս հրազն մի՛ վառել.
Նովքիսայ մարդի հետ սովղայ մի՛ առել,
Երե Բաղցամ մնաս օրով, Բաղարով»:

Բարոյական այս խրատներից յետոյ, երգիչը խնդրում է իր
սիրելիներից, որ իրենց ականջումը պահեն իր խրատները և զգոյշ
կենան կեանքում:

Սիրային: Բաղէրի միւս երգերը սիրային են և արեւելեան գովա-
սանութիւններով լի. այդ երգերից մէկի մէջ երգիչը վառ գոյներով
գրաւորում է եւրի գեղեցկութիւնը և հեթանոսական պաշտամուն-
քով փառաբանում նրա գեղն ու հրապոյրը. նրա հարն ունի սի-
րուն կրես, որ աշխարհիս շնորհքն է, «արեւակաւն» աչքեր, որոն-
ցից լուսինն է սասանում, սիրուն ծամ, որ հանում է ճանապար-
հից թէ թուրքի և թէ հայի, գեղեցիկ յունքեր. որոնք երգչի խել-
քը տանում են զլիւից, վերջապէս վարդահամ բքրտունքներ», որոնք
անմահական ջուր են: Ահա այս բոլոր շնորհքները, որ Աստուծո
պարգեւել է երգչի հարին, դարձրել են նրան «հրեղէն», որի նմա-
նը չկայ ոչ «հողեղինում» և ոչ էլ Մօսկոֆում, Շամում, Հալաբում,
Թիֆլիսում և Գիւլիստանում:

«Աչքդ արեւակաւն, լուսնի սասանի,
Լուսնակն շաւիղդ տեսնի, փաս առի.
Հողեղինում չկայ, որ Էնդ խաւսանի,

Հրեղեն իս, ամեն քեզ եր ես Ասուած:
 Մօսկոֆ ու Մարգամ, Շամս եւ կամ Հալաբ,
 Թիֆլիս, Գիւղջսան քայ չունիս մարլաբ.
 Քրօնմեդ անմահական ջուր ասեմ գուլաբ,
 Իրախսի օրն ամեն քեզ եր ես Ասուածս:

Այսպիսի գեղեցիկ եարի սէրը քաշում, կեռացնում է չինարին, փշրում սարերին, շլացնում եպիսկոպոսին և փշրում փիլիսոփայ փափին.

«Քո սերն չինարն քաշի՝ կեռանայ,
 Փերուի սաբերն քանեն, ինչ կելնի.
 Եպիսկոպոս քեզի տեսնի օրանայ,
 Փերուի փիլիսոփայ փափն, ինչ կելնի»:

Գեղեցիկ եարին սիրում է երգիչը ջերմ, անսահման սիրով և այդ սիրովը խելայեղ՝ նրա սիրտն այլևս ոչ մի տեղ հանգիստ չունի. եարի սէրը նրա մէջ յարուցանում է զանազան խոհեր և զգացումներ. նա փափագում է ձեռքը դրած եարի պարանոցի վրայ, դետափը գնալ «թամաշայի».

«Էն օրն ինչ կելնի քեզ տեսնեմ բարով,
 Իմ սիրեն ու քո սիրեն մին ժողով.
 Դաս բէ գարգան անենք, գուշայ քնարով,
 Թամաշայ երբանք գետափն, ինչ կելնի»:

Եւ դրանից աւելի մեծ երջանկութիւն չ'կայ երգչի համար: Սակայն եարն անտարբեր է մնում և երգչին թողնում է օտարի շնորհած դարձեալ: Սիրակորոյս երգիչը համակուած անհուն թախիծով գիշեր և ցերեկ տանջւում, մորմոքւում է սիրոյ կրակից. բայց վերջը նա անմեղ զանգատներով դիմում է եարին, պատմում իր ցաւը և խնդրում, որ իրան «խօշալ» անի.

«Էդ ինչ խաւաք ա իմ սիրելի եար,
 Թող մեկ օր խօսեալ անես, ինչ կելնի.
 Չուր յեփ դաբէդաւ անես դարգմանդ,
 Դու գոս քո մօր կօթիցն, ինչ կելնի»:

Այնուհետեւ անցնում է վեց օր, բայց եարը դարձեալ չի գալիս: Երգիչն այլևս չի կարողանում դիմանալ և խելայեղ մահ է գալիս, որ սիրականին գտնի ու իմանայ նրա մտադրութիւնը.

«Դտանեմ, սիրեն իմանամ,
 Ձրուց տամ, զօֆթաւն տեսնեմ.

Ձրուց, զօֆթաւ ասացի ա,
 Սօր վեց օր ա գնացի ա»:

Ապա երգիչը «ֆալ» է բանալ տալիս, որ իմանայ եարի «տօմարը».

«Բաղիւր օղլուս արած եսիւր,
 Խելս տարաւ են բիփիւրն.
 Ձալում ինչ եր իմ բախսիւրն,
 Ֆալ բանամ, իմ տօմարն տեսնեմ»:

Վերջիվերջոյ երգիչը գնում է եարին տեսնելու. նրա սեռեական ամբողջ «մէջլիս» էր, իսկ «թաղն» ոսկէթուփ: Սարը երգչի ձեռքից բռնելով՝ գնում է ծաղիկներով և վարդերով զարդարւած գեղեցիկ այգին.

«Ոսկաթուփ արաւել չիգին,
 Եարս շանկ՝ չեւ տանջիկին.
 Ձեռս բռնեց, տարաւ իգին,
 Գիւլ գիւլտան բաղն քամամ»:

Այսպիսով երգիչը հասնում է իր նպատակին:

Երգիծական: Բաղէր օղլին թողել է նաև երգիծական մի քանի ոտանաւորներ էլ. դրանցից մէկի մէջ նա կատակելով խօսում է Բաբաննից ջհուդների մասին.

«Էլս տեսեք ինձ ինչ արարին,
 Լանգ Բաբանեց ջհուդներն.
 Ինձի տարան տունն հալով
 Բանացուին դալմադալով.
 Անխաց դուս արարին լալով,
 Լանգ Բաբանեց ջհուդներն»:

Իսկ միւսը հակադրութիւն է, որով երգիչը յայտնում է մի շարք այլաբանական մտքեր, օրինակ.

«Եալալ խեւ խօյ չեմ, քի հարախեղ գեկեմ.
 Մգամ ես քաբաս ամ, քո կապեն նեւեմ.
 Սովդագար ամ, կուգե՞ս առեւեղ բեմ,
 Խառաս խօյ չեմ, քեզ լուղ ծախեմ.
 Դու առուս:
 Փալվան խօյ չեմ, քի գոմ հրադ վառեմ,

Մգար ես բօւայ եամ, որ պաշտում առեմ.
Դալաւ ամ, կուգե՞ս աբախչիդ կարեմ.
Հալաջ խօյ չեմ, որ ես դուդ ծախեմ,
Դու առուս:

Ահա մեծ մասամբ այն ամենը, ինչ որ հասել է մեզ երգչի քնարից:

Լեզուն, Բաղէրի երգերը գրւած են Ջուղայի բարբառով, որոնց մէջ սակայն գործածւած են բաղմամբիւ թուրքերէն, պարսկերէն բառեր և արտայայտութիւններ: Դրանցից հետեւում է, որ երգիչը ծանօթ է եղել թուրքերէն և պարսկերէն լեզուներին:

Ընդհանուր ճայեացք: Բաղէրն մտաւորապէս բարձր կանգնած լինելով իրեն շրջապատող հասարակութիւնից, իր երգերով դօրեղ ազդեցութիւն է ունեցել իր ժամանակակիցների հոգեկան աշխարհի վրայ և մեծ յարգանք ու պատիւ է ձեռք բերել:

Նրա երգերից մի քանիսն ընդգրկում են ԺԸ. դարի Ջուղահայ ժողովրդի կեանքը, որոնց երգիչն եղել է ականատես և հարազատութեամբ նկարագրում է մեզ դարեշրջանի անցքերը և որոնց ուսումնասիրութեամբ հնարաւոր է գաղափար կազմել Ջուղահայ ժողովրդի անցեալ կեանքի ու պատմութեան մասին, և դրանով էլ ընդորոշում է երգչի նշանակութիւնը: Ճիշդ է, որ Բաղէրն իր երգերի մօտիւով և կատուցւածքով շատ ցած է թէ Յարթուն օղլուց և թէ Ամիր օղլուց, բայց և այնպէս նա իր աշխարհայեցողութիւններով ու մտորումներով ունի իր համեատ տեղը մեր աշուղական գրականութեան մէջ:

2 Յունւար 1921
Նոր—Ջուղա

Արամ Երեմեան

ԲԱՂԷՐ ՕՂԼՈՒ ԵՐԳԵՐԸ

Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ

1. Խալ հարսանհարութեան Նադեր Եանի

Աստուած դու մեզ մին ձար արա,
Շահը թամամ աշխարհ ա ուզում.
Երկիր քանդում վարայ, վարայ,
Ողջ զգար, զգար ա ուզում:

Ղգար ա դրա մաթլարն,
Քաշում ա աստղերի խաւարն.
Յիրար տալիս չար քթարն,
Միջին գօֆթար ա ուզում:

Գօֆթարն ուզում ա իմանայ,
Սաֆար ունի Խուրմատանայ.
Զի կշտացել Հնդստանայ,
Նոր լալ ու գուհար ա ուզում:

Լալ ու ջուհարն, գուհարն,
Կապում ա Բարխանայ բարն.
Բղթում երեք տարուայ մալն,
Տանն էդչանք թօմար ա ուզում:

Թօմար, թօմար առաւ վարայ,
Քանդէց, խօշնիշին է աւարայ.
Դէմն անում էր մուստարաթ,
Դէմն խունաւար էր ուզում:

Խունաւարին քարքանդ անում,
Արդ անողին ա սպանում.
Ամէն գեղից մի զուլ տանում,
Ղի մի նօքար ա ուզում:

Ղուլ նօքարին չարաւ ֆօրսաթ,
Ուր ազգին չթողէց հալ ու աղբաթ.



Ո՛չ պղինձ թողէց, ո՛չ արկաթ,
Շամփուրն իւր համար ա ուզում:

Արկաթ ու շամփուրն ու թուրն,
Ողջ բոլորում, քաշում ուրն.
Բէնազամ դրա շըհուրն,
Բէգոաստ, խօշքընար ա ուզում:

Բէգոաստ շալ մահուդն,
Կտրէց աշխարհիս ումուդն.
Ջահիր ա Թուրք, Խայ, Ջիսուդն,
Ողջին դարբէշար ա ուզում:

Դարբէշար անուա ա գերի,
Էդ ինչ ծէս ա թապաւորի.
Դէմն գցում ա չալթուկ, գորի,
Դէմն օրդու բազար ա ուզում:

Օրդու բազարն յետնէն քաշում,
Ո՛չ զընում ա ո՛չ ամաչում.
Թամամ քէդխուդէքին կանչում.
Խէտն քեալանթար ա ուզում:

Գեալանթարներին բերում ա,
Թու ու չոր մի տեղ երում ա.
Արքունուանայ ջուրն բերում ա,
Բնօխ ու մէհմար ա ուզում:

Բնօխ ու մէհմարին գրեցին,
Մոկարխանէքըն մհրեցին.
Արքունուանայ ջուրն չրեցին,
Օսմանլու փաքար ա ուզում:

Օսմանլուն կառնի էս տարի,
Աստուած կ'տայ ուրն բարի.
Կամքն Աստուծոյ կատարի,
Թէ քինչ էս բէթար ա ուզում:

Գինչ էս բէթարն խօ չենք նման,
Բիմուրվաթի ձեռնիցն աման,
Թուրքն գոլման ա խայաման,
Իւր ալազգին ճար ա ուզում:

Ճարըն գոյ՝ ճար անողէն
Հուսըն յերկնային շողէն.
Բաղէր օղլուս Ստեղծողէն,
Քրիստոնէն ճար ա ուզում:

2. Խաղ քիւն ձԼԱ.

Թիւն ձԼԱ շուն նադր սարվանն,
Վեր վառէց կրակն՝
Ոչ միայն երկրումս մարդ չեթող՝
Այլ թամամ աշխարհս էրեւ մին-մին մահակն:

Մահակ էրեւ, ողջին մին-մին լուծէց լուծ,
Էլ ո՛չ զրուց իմացաւ, ո՛չ անվալ հարցուց,
Մեծ ու պատիկ ողջին խեղդէց, քօռացուց,
Յետնումն դձում ա մին-մին թալակն:

Թալակի միջումն ծալման ին, կեռաման՝
Թէ բալքի պոծանեն, սուտ-սուտ ին մեռման.
Արծաթն երեք բիստի թանխա չին վեռման,
Մսխալն չոք արասի ոսկէ բրմակն:

Ոսկի, արծաթ ինչ որ ունին թանխեցին,
Ջուր ու բուխտան տվին՝ Աղինուն կախեցին.
Բէկրաստն գաղն վեց արասի ծախեցին,
Ղիտրն երկու հազար դիան լեղակն:

Լեղակն դեռ թանկ էր վեռէլ, դարձէլ էր եասի,
Փողն շատ էր սիրում, մահալ չէր դնում խաօի.
Պղինձն վեց շալի՝ քուսպէն երեք արասի,
Մինն մին բիստի ա սուլուկէ պլճակն:

Սուլուկ կերանք, ընդուր մեր շունչն պարզէց,
Շատ մարդ մեռաւ՝ շունն կերաւ չթաղվէց.
Տէրտէրանին փախան՝ մուղղոսին գաղվէց.
Դադ կանչէց Պարբէլ, Մուքէլ հրեշտակն:

Դադ կանչէց թամամ աշխարհս՝ սուգ բոնէց աղայ,
Համ խալիսի տկլորում ա, համ տալման ջաղայ,
Տասն, քսան մուստարաթն նոր բացէլ ա թաղայ,
Դառ կիսատ ա, չենք կարկատէլ մին ծակն:

Կիտառ չեթող զուլմն թամամէց զալում,
Հալ աշխարհս մաշէց՝ սարէրն ա հալում,
Քոռացնում, յետնէն չղբօջ ա անում,
Ոտն քաշել տալման զափղի տակն:

Ղափղի հետ ունէր մօհրադ ու սէրն,
Շան ու կատուի ձէն խանի դրա խէրն ու մէրն,
Ո՛վ էր լսէլ, ո՛վ էր տեսէլ ալֆէրն,
Սուտ գուրս երեք էտ սատանի փէշակն,

3. Խաղ Բաղէր օղլու վասն աւերածոյ Զուղայու

Դու մեծ աս, քո ողորմութիւնն ա անչափ,
Ամենայն ժամ կամնցօղ բարի Աստուած,
Մեր մեխկն շատացէլ, գցէլ զալումի հափ,
Դուչար արարէլ, մեզ ազատի Աստուած:

Ազարն տարէց տարի շատաման ա,
Էս դճր ոռզիգար՝ էս դճր զաման ա,
Մարդու մի դարան դարտի վերայ գոլման ա,
Ես խօյ չի գիմաման սարն սարի Աստուած:

Դարան դուկուն դառցէլ, բացվէլ մեր սինին,
Աստուած խառանի մեր ֆրիաթի ձինին,
Բառկի տվին դառդակվեցան Աղինին,
Էլ հալ չունենք, չէ մնաց, բիչարի Աստուած:

Հալ ու բուռզգարն ինչ վատացէլ ա,
Ասկուտակ դօստ ու մուհասիպն դառցէլ ա,
Մեղայ քի Տէր՝ մեր մեխկն շատացէլ ա,
Դուրման ա զարարն զարարի, Աստուած:

Ջարարն տալման ա ո՛վ կապէլ մին ձեռն՝
Մըղամ բինչ էս իւել բան կառի նեռն,
Իլայի էս դժոխք սաստիկ ձմեռն,
Կիսամորթ արարէլ էս տարի, Աստուած:

Էս տարէն ձմեռն՝ մի գինէն ձունն,
Մեծ նաչաղանալն՝ էս թանկութիւնն,
Ողջ թողունք, յուսանանք Երրորդութիւնն,
Այսուհետեւ խէրն կատարի Աստուած:

Խէրն յեփ կատարի՝ շառիցն պոծէլ ան,
Որչափ դառդակվեցան՝ էլ մեզ մեծ մէլ ան,
Չուր հօրս ինչ մուստարաթ օր ունի՝ տուէլ ան,
Մինին հարիւր, հազար յետ վճարի, Աստուած:

Մինն ձէ՛լ դառցաւ նամարան,
Ջանէմարկ քանդեցինք չուր խասաւ էն հատն,
Դառ խէրիք չէր մեր դարան,
Բոր դառցաւ փէրիա՝ Բուրվարի, Աստուած:

Փէրիա չամբերին մեր սրտին շատ դամայ,
Չարութաւոր մահասիլն հնի շաթամայ,
Ո՛վ որ մեր Զուղու շէնին դիշման ա՝
Երկու աչկի լուսն խաւարի, Աստուած:

Քալանթարն պարզերես պախի Յիսուան,
Մեզ բարեխօս ելնի Մարիամ կուան,
Էլ ոչինչ ճար չունեմ, դու աս մեր յուան,
Ճար առ ես ամենայն անճարի, Աստուած:

Ամենայն անճարի՝ ճար և գուղար տաս,
Էստի յետ դջվէնք, էլ չտեսնենք նաս,
Քո պայծառ լուսէն՝ լուս առեա ողորմաս,
Միթէ Զուղա, թամամ աշխարհ ի, Աստուած:

Զուղա խօշխալանան, առեն ասուլիս՝
Օր մենք ուրախութեամբ գոնք նստենք մէջլիս,
Թիջն ԱճԼԱ Բաղէր օղլիս,
Ինչպէս օր տեսայ՝ էնպէս արդ արի, Աստուած:

4. Խաղ Բաղէր օղլու վասն ճեղութեան Զուղայու

Զուղու բուշուլ, բուշուլ բէչէքն՝
Վերեմ ին քաշում իւրէնց փաչէքն,
Ընկէլ ին Զուղու քուչէքն,
Որ տեսնին մին քար կէր ծախու:

Քանի լուրջ անք՝ քար կ'ծախենք:
Երբ կ'բէֆովանանք՝ կ'փախենք:
Մենք դառ պէտք ա Զուղա պահենք,
Զուղու մին սահարքար չկայ:

Ջուղուս մին տէր չունենը դիտուդ,
Ջուղուս մարդի մէյնդանն ա դուդ.
Չոք ուհաթ անը, վեց զարուդ,
Դառ էլ ասման փաքար չկայ:

Սաբաէնի խէտ բարի լուսին,
Մասիլն եկաւ փէտն ուսին.
Չոք կուժ ա, ութն ղոռովայ,
Դիթարնին վեր դէն երթան, քանի խով ա:

Բաղէր օղլի դու քեզ ջան տուր,
Սաղդ վեր առ, գնա գեղէց գեղ ման տուր.
Բեր ամիսն չորս թուման գլխամալ տուր,
Քինչ քեզ էլ բաշ սովդդար չկայ:

5. Խաղ Բաղէր օղլու վասն Նաղիբ օսմի սպանման

Նաղը շահին սպանեցին՝
Ասացինք վերացաւ աշխարքիս չարըն.
Նոր Աղէլշահ անուանեցին՝
Ասացին գնջվէց էս աշխարըն:

Աշխարըս քինչ համէն ելաւ վատ,
Իլաի լօռի ձեռնէն դատ.
Ասման կը գոյ, կառի աբադ,
Շաթ ախնարար սարդարըն:

Սարդարի գոլն ուրախացանք,
Ղաթի գէճէց, շուր յիմացանք՝
Ամսով, տարով դուղնը կացանք,
Քաշվէց մեր շունչ ու մափարըն:

Շունչ ու մափարն մեզնից վերացաւ,
Ով շաղկամ բերէց՝ փող բառցաւ.
Խաղն ութն ապտսի դառցաւ,
— Բիստի զաղարըն:

Սատանի փէշակիցըն սովորէց, վեռէց,
Էն դամն շիւացաւ, թաղաթ չը բերէց.
Ութն բաշ քէդիսուդին մին զարբին երէց,
Էս խէտս ոսկունն խասաւ դանակըն:

Էս խէտս բալորէց, խառնէց չոր ու թաց,
Էտ մոչինչ մասապի գրում չէր դրած.
Է՛յ զալում, բիմօրվաթ քաֆուր անաստուած.
Դոր մոռացար Ջուղէցէքոնց ամակըն:

Ջուղա քաղաք գէճէց մախ ու սուր ու սով
Քոռացուց աղբրնին, ցամաքացուց ծով.
Էս երկու հաքամն պոծան Աստուծով,
Տէրն Մասիս քալանթարի քոմակըն:

Տէր Յիսուս դու արիւր էտուր հախիրն,
Չուժքի ուր զաթըն էր դիշնամի իրըն.
Ձիւր ու զաւալ արար թամամ երկիրըն,
Խաք ու եքսան Սպահանայ քաղաքըն:

Սպահան քաղաքին դառ էլ էվուա,
Էլ էնչանք ապատ ա, որչանք օր չօր ա.
Խասաւ Քրման Նե ընդաւ արար յօլլա,
Մարդոյ գլխով շինում ա աշտարակըն:

Մարդն ջառթէց, էլ չի տալման ֆրօաթըն,
Սրեք տարի է ծոէլ ա աղալաթն.
Աղվանանու խէտ արար մասլահաթըն՝
Օր հէքան կատարի իւր ասկուտակըն:

Հէքան լուսանալու յիմացան բանն,
Ասացին եկէք պոճէցանենք մեր ջանըն.
Մատսալայ բէկն ու Մատղուլի խանըն,
Քսան թաբինով արարին գուշակըն:

Գուշակեցին յիրուր, խանեցին խոգէց՝
Մտաւ մէջ հարամն, թուրն պլոկէց,
Յիշէց Տէր կենդանին՝ գլուխըն ջոկէց,
Բընազամ Մատսալարէկի ոսկըն:

Ըռակ մարթի ունէր՝ արար ջօռաթըն
Վերէն դառցան՝ լաշըն արին փրաքըն.
Յիփ օր աղբօր որդուն տարան խարըն.
Ասաց, լէվ ա կտրէլ վղի շառակըն:

Գլուխըն տարան Ալէղուլի խանի մօտըն,
Ասաց, թու, քո ամալըն փաթաթվէց քո ոտըն.

Յամէն քաղաք փարթաւեցին մի ճոթըն,
Եւստէն կոտորեցին զարմ ու զաւակըն:

Զաւակըն մեզ մեծ դարդ էր մեղնից դափ ելաւ,
Աղէլ շահ թագաւոր դրին՝ սափ ելաւ,
Վասիլի ջահանդամ վարթրաւ ելաւ,
Լէվ փչացաւ Մէլիքմամսադի մշակըն:

Փչացաւ նաջուշ էրեկ Ամիրհասանըն,
Ուզէր կանցէն եւել առեր ջարբի բանըն,
Թանգուլթիւն գծէց, տեղաւորէց դանըն,
Փանքադունէն շինէց խալխի խօրաքըն:

Խալխըն թաժամ ջաթէց զալում էս տարի՝
Ընտուր ինքն հանդիպէց անկարծակի չարի,
Մտաւ զալէն, սառկացուցին շանվարի,
Կիսատ մնաց թագաւորական գուդակըն:

Թագաւորի բարգային մօտկանալ մէք,
Յեփ գինի խմէք՝ քէֆօլանալ մէք,
Հուքմի խասանէք՝ խէպառտանալ մէք,
Զուր լուս վառ չի մնալ մոնչում ճրաքըն:

Ճրաքըն խանչկէց, բատալ գնաց արունըն՝
Հլղա կ'կանգնի Ըսպահանայ սունըն,
Քանդվէց էս երկու գօրբզօռի տունըն,
Ամպրվէց դունն՝ զըմպրվէց փակըն:

Էս երկու գօրբզօռին կտանք նալաթըն,
Փա՛ռք Աստուծոյ պոծանք էստոնց սուրաթէն,
Բաղէր օղլիս յինք կառում ջումիաթէն,
Շուն նաղէր սարվանի պաշտումախակըն:

Բ.

ԲԱՐՈՅԱԿԱՆԻՐԱՏԱԿԱՆ

1. Աղամայ որդի

Աղամայ որդի քո ստեղծողն միտդ բեր,
Գիշեր, ցերէկ փառքն տուր համիշայ,
Փառք տուր Աստուծոյն, տա՛ւ Հայր մեղայ,
Զորքի՛ր՝ ասան Տէր ողորմեան, Տէր յիշեան:

Տէր յիշեա՛ւ ասան, գնա՛ւ ժամի դուռ,
Որ ամենայն ժամանակ քեզ քամակ ելնի կուռ,
Ուզում աս կուշտանաս՝ հախ առ ու հախ տուր,
Քո Ստեղծողիցն արա անդիշայ:

Անդիշայ արան դու նրա հաղորցն,
Յետ մի դառնալ քո եղբար, շառթիցն,
Ո՛վ յետ չի դառնալ լոյս հաւատիցն,
Մեր Տէրն նրա խէտ խաշտ ու բարիչ ա:

Ում խտուրն, որ խաշտ ա, ճրագն վառ ա,
Ում գործքն բարի ա, անարատ գառ ա,
Եօթանասուն երկու ճուղ կայ, մին ծառ ա,
Տաններկուքն ոսկի ա, բաղինն զամիշ ա:

Որն զամիշ ա, ոսկուն չի լայեղ,
Ամէն մարդ իւր գործքով ունի իւրն տեղ,
Նա մին լոյս գերեզման, տաններկու կանթեղ,
Ղէրաղ լուսաւոր, չուր ումբիքն փիշ ա:

Ում թիքն որ փիշ ա, նա ունի յոյսն,
Հաւատով հաւատամք մեր Մարիամ կոյսն,
Տարէն մին խէտ դուս ա գալիս էն լոյսն,
Հոյսն մեր պահապան յուրիշ ա:

Պահապանն յուրիշ ա, փաշայ ու խան ա,
Տարին չուր բոլոր աէֆիլ, սարգէրդան ա,
Բաղէր օղլուս խալքն թախտիք դիվան ա,
Գիշեր, ցերէկ նրա հէշխէն դաբրիշ ա:

35083



2. Ե՛կ իմ անդադար սիրո՞

Ե՛կ իմ անդադար սիրո՞ քեզի տամ օգուտ,
 Գիրքեր, ցերեկ քո փառքն տո՛ւր համիշայ.
 Փառք տու՛ր Աստուծոյ, ա՛ռ ողորմութիւնն,
 Դրիստ պահիր քո շարթ եղբար լսունըն:
 Էնչափ կացիր, մինչ քո դատըն դայ քո դուռն,
 Վեր ա՛ռ, տուն տա՛ր մէհրէքան ազաթով:
 Մէհրէքան ազոթն արա՛ երթայ ամաչի,
 Դնայ իւր դօստ ու զիշնամն ճանաչի.
 Էնչափ կացիր մինչ քո դատըն քեզ կանչի,
 Յայնժամ վեր կայ. գնա ջօռաթով:
 Զօռաթն նամարդին չի՝ տղամարդինն ա,
 Զունքի ինքն իւր եղբար ու շարթին ա,
 Իմանողի քշտին խաֆաթն մին ա,
 Զը ծակես դանակով, չըտաս բաղաթով:
 Քաղաթով տալն խաֆադ չի՝ դուշնամին,
 Ուսուլով պիտի խանել նորա պնչի բամին.
 Թալար ունես՝ արդ մի անել հաքիմին,
 Խտուրն սազմիր՝ յինք առ դաֆաթով:
 Դաֆաթով յինք առնելն մի տալ թաղափուլ,
 Զլարն պիւրկ պախիր, չնի թողուս թուլ.
 Յառէջ խօշի ասա՛ թէ չանի զարուլ,
 Յետոյ խտուրն խօսիր յուջաթով:
 Յուջաթի տակ մի գձել քո բանն,
 Թո՛ղ գնայ պոռուցանի իւր ջանն.
 Թէ ուզում աս գլուխ տանես քո բանն,
 Ապա կայացրո՛ւր սապր ու թաղաթով:
 Առանց համբերութեան դու բան մի առել,
 Օտար ձիթով քո ճրագն մի վառել.
 Նօվբիսայ մարդի հետ սովդայ մի առել,
 Եթէ քաղցած մնաս օրով, շաբաթով:
 Օրով, շաբաթով դուզն մնալն մանէ չի,
 Ո՛վ կասի նօվբիսայ մարդն վնաս չի.
 Մին յինք առնես՝ տասն յետ տաս՝ զանէ չի,
 Մոհապիլ կ'ըբրի զարդ ու բարաթով:

Մոհապիլ կ'ըբրի դուռըդ կ'ընի,
 Ոչ ուր չի գնալ, ոտներն կ'խընի.
 Գիտուն դրկցին գերի լինես լաւ կ'լինի,
 Քան անպէտ եղբօր հետ նստես սօհրաթով:

Անգէտ եղբօր սօհրաթն շատ վատ ա,
 Թալաքում կ'ընի, խաֆաթն շատ ա.
 Իմ սիրելի, սոքա բոլորն խրատ ա,
 Անկաջումըդ պահիր, կայ գզուշութեամբ:

Բաղէր օղլի, դու լէւ կացիր՝ լէւ արա՛,
 Ես խրար ամ, վատ մարդոյ տեղն խաւար ա.
 Խօքէրդ իմացիր, հարգայ մի փարթաւել աւաթայ,
 Եփիր կուլումըդ՝ առա՛ փասանդով:

Գ.

Ս Ի Ր Ա Յ Ի Ն

1. Էղեան գեղեցկութիւն

Էղեան գեղեցկութիւն հօսն ու սափաթն,
Խող, ջուր, կրակ, քամու քեզ էր ետ Աստուած.
Աշխարհիս շնորհքն քո սուրաթն,
Խող, ջուր, կրակ, քամու քեզ էր ետ Աստուած:

Աչքդ արեկական, լուսնի սասանի,
Հուսնակն շաւղղ տեսնի, փաս առի.
Հողեղինում չ'կայ, որ քեզ խառանի.
Հրեղէն իս, ամեն քեզ էր ետ Աստուած:

Մամդ ճանապարհից խանէց թուրք ու խայ,
Հունքդ խեղճ գլխէս տարաւ ջայթջայ.
Աֆլաթուն հաքիմն քո դուռն բան գայ,
Լողմանայ զնդիցն քեզ էր ետ Աստուած:

Մօսկոֆ ու Մարդամ, Շամս և կամ Հալաբ,
Թիֆլիս, Գիւնջատան թայ չունես մաթլաբ.
Քրտունքդ անմահական ջուր ասեմ գուլաբ,
Դրախտի շօրն ամէն քեզ էր ետ Աստուած:

Բաղէր օղլուս գլխին կայ քո զաղամն,
Ուրախութիւն կեղնի սօհրաթ ու դամն.
Դոր կերաւ, մերկացաւ ճւայ—Աղամն,
Էն պաղի խամիցն քեզ էր ետ Աստուած:

2. Բո սեբն

Բո սէրն չինարն քաշի՝ կեսանայ,
Փշրվի օարերն, տափն ինչ կեղնի.
Եպիսկոպոս քեզի տեսնի շիւանայ,
Փշրվի փիլիսոփայ Փափն, ինչ կեղնի.

Էն օրն ինչ կեղնի քե տեսնեմ բարով,
Իմ սիրտն ու քո սիրտն մին շառթ, եղբարով.

Դաս բէգարդան անենք դուշայ քնարով,
Թամաշայ երթանք գետափն, ինչ կեղնի:

Գոխտիկ ինձ աղարկէց հար շատ բարով,
Ուրախացայ, խօշնալ ամ իմ հարով.
Աշուղ ու մուղալաթ սաղանդարով,
Կոտորվի քաղաքի դատն, ինչ կեղնի:

Բարն վեր առէլ հար, ինձ քարկոծում,
Զալում ինձ թողել աս օտարի ճարում.
Մին խարաբայ քուչում, խօլի գուդարում,
Թէ ընկանես հար իմ յափն, ինչ կեղնի:

Էդ ինչ խասթաթ ա, իմ սիրելի հար,
Թող մէկ օր խօշնալ անես, ինչ կեղնի.
Զուր յեփ քարբէղար անես դարդմանդ,
Դու գոս քո մօր կշտիցն, ինչ կեղնի:

Տանէն դուս կուգաս հար ինչ նազով, դամով,
Ղրայ ինձ սպանես ըսկեանջայ պաչով,
Արի պինդ պատատվենք, կուլ ելնենք քո վզով,
Երեսս երեսիդ դնեմ, ինչ կեղնի:

Սեւածամ թիկունքիդ արէլ աս դաստայ,
Բանդ վար աս արէլ, ջահէլ նով թազայ,
Զալում շատ խօյ չեմ ուզում, մին, երկու փառաստայ,
Ուստես Բազէթ օղլուս խափն, ինչ կեղնի:

3. Այ քե փախաւ

Այ թէ փախաւ, գնաց,
Մին էլ գայ դիդարն տեսնեմ.
Դիդարն սիրտս մտանի,
Վա՛յ թէ չունիմ մէրէվանի:

Մգար ջառ տամ, չգտանեմ,
Բաս Զուղա անեմ սօրաղ.
Ուրէտար ման դամ դիմանամ,
Առանց տեսնել դոր կուշտանամ:

Դտանեմ սիրտն յիմանամ,
Զրուց տամ, զօֆթարն տեսնեմ.

Զրուց, Կօֆթար շատացել ա,
Սօր վեց օր ա գնացել ա:

Թե առել բարձրացել ա,
Բաջրուռի զաթարն տեսնեմ.
Բուռնի զաթար չեմ գտել,
Էս ինչ փորձանաց մէջ ա՛մ ընկել:

Բաղէր օղլուս արած ետիւր,
Խելքս տարաւ էն բիփիրն.
Զալում, ինչ էր իմ թախսիրն,
Ֆալ բանամ՝ իմ տօմարն տեսնեմ:

4. Գնացի դիւբարս սեսնեմ

Գնացի դիւբարս տեսնեմ,
Մէջլիս էր օթախն թամամ.
Մին էլ վարավուրդ արարի,
Ոսկաթուփ էր թաղն թամամ:

Ոսկաթուփ արարել չի գին,
Եարս ջահէլ՝ չէր տանտիկին.
Զեռս բռնէց տարաւ ի գին,
Գիւլ գիւլտան բաղն թամամ:

Գիւլ գիւլտան բաղն ծաղիկ էր,
Մէջլսուսն երկու սաղի կէր.
Եարիս դուշման շատ եաղի կէր,
Անում էր նասաղն թամամ:

Նասաղ անում, տանում գերի,
Քո սէրն շատ մարդի կերի.
Բաղէր օղլուս ձեռ կ'ըբերի,
Դուռ ու դրկից թաղն թամամ:

5. Ասի, դիւբար

Ասի. դիւբար, էդ գինաթէն ինձ էլ տուր.
Ասէց. արի կիսիր սամարայ սիրոյն.
Ասի. վախման ամ խափեօ և ոչ տաս.
Ասէց. գնա խաթիրջամ արա սիրոյն:

Ասի. դիւբար, սիրտս սրտիդ հետ մին ա,
Ասէց. գնա երկու ձեռքդ դիր խինայ.
Ասի. երեսդ արեկական նման ա,
Ասէց. աչկերս շամս ու շամար ա սիրոյն:

Ասի. դիւբար, քեզ տեսնողին բլայ ա.
Ասէց. ով տեսել ա քեզ պէս ազգալ ա.
Ասի. վզումդ դօղ ա, ոտնումդ խալ-խալ ա,
Ասէց. մէջկա կապած քամար ա սիրոյն:

Ասի. կեռքնիդ մարգարիթ դանայ,
Ասէց. գին չունի, սառաֆն սարգէրդան ա.
Ասի. մաղերդ չո՛ւմ տէնց փէրիշան ա,
Ասէց. եկ ոլորիր, ծամ արա սիրոյն:

Ասի. դիւբար, չուր երբ քեզ տեսնեմ, դողամ.
Ասէց. չո՛ւմ դողման աս, միթէ գրող ամ.
Ասի. Բաղէր օղլիս ածող, կանչող ամ,
Ասէց. կշտիս նստիր՝ դամ արա սիրոյն:

6. Ասի. նազլու դիւբար

Ասի. նազլու դիւբար, չո՛ւմ բիդամաղ աս.
Ասէց. վեր առ ածիր, դամ արա սիրոյն.
Ասի. ռուսխաթ տուր խտուրդ խաղամ.
Ասէց. դու լսի՛ր, հազ արա սիրոյն:

Ասի. նազլու դիւբար, ինձ երում ա կրակ ու բոցդ.
Ասէց. մալհամ կտամ լէւանայ խոցդ.
Ասի. ռուսխաթ տուր, գոմ մտնեմ ծոցդ.
Ասէց. մին դամ ըլթմաս արա սիրոյն:

Ասի. նազլու դիւբար, քո սէրն ինձ կ'սպանի.
Ասէց. չի սպանել, խելքդ կ'տանի.
Ասի. քեզ համար կ'շինեմ ոսկէ մատանի.
Ասէց. գնա ակն ալմաս արա սիրոյն:

Ասի. նազլու դիւբար, խելքս ցրիւ, միտքս կորած ա,
Ասէց. էնդուր, որ ինձ խէտ սովորած ա.
Ասի. դիւբար, չո՛ւմ մաղերդ պըճըճած ա.
Ասէց. եկ սանդրիր, ծամ արա սիրոյն:

Ասի. նազու զիւրար, պոնչկնդ նաւ, աչկէրդ ծով ա.
Ասէց. զէրազ էլ շատ մարդ կ'գովի.
Ասի. բեզ հետ առող, լսողն ո՛վ ա.
Ասէց. Բաղէր օղլի աշուղն Զուղու:

7. Կեցովս յանց աս կալման

Փաղտուկ կշտովս յանց աս կալման,
Ինձ յետնէդ հասաս աս շնում.
Մին կիսատ բարով աս տալման,
Էն էլ դառ հարաս աս առում:

Փաքամ չունեա սուլթան, խանից,
Էլ չո՛ւմ վախման աս ինձանից.
Դու խօյ դուռ եկած աս բանից,
Էլ չո՛ւմ էտչանք վասովս աս առում:

Ինձ տանում, շիլադանում աս,
Եարինիս թաղացանում աս.
Չեմ խապար վաղացանում աս,
Թէ մէկն հավաս աս առում:

Ասի. ում որ աղարկեմ գաս,
Դրիստ վաղայ դնես. շարթ տաս.
Եթէ սրտումդ տեղ չկայ,
Էլ չո՛ւմ էտչանք նազ աս առում:

Բաղէր օղլուս չարչարում աս.
Ո՛չ շարթում, ո՛չ եղրարում աս.
Ո՛չ մաթլարս կառարում աս,
Ո՛չ ինձ մուրախաս աս առում:

Գ.

Ե Ր Գ Ի Ծ Ա Կ Ա Ն

1. Էլս sbukf

Էլս տեսէր ինձ ինչ արարին,
Լանդ Բարանէնց ջհուղներն.
Ինձի տարան տունն հալով,
Բանացուցին զալմալով.
Անխաց դուռ արարին լալով,
Լանդ Բարանէնց ջհուղներն:

Կատուի աչկէրն կապեցին,
Ուրէնք նստան հաց լափեցին.
Հացն թաթովն չափեցին,
Լանդ Բարանէնց ջհուղներն:

Ես խնդրեմ Տէր թագաւորիցն,
Խանեն յանկարծ¹⁾
Կտրեցին հախիս փողիցն,
Լանդ Բարանէնց ջհուղներն:

Սագահ էի, ջավղաթէնաս,
Բաֆուր, բիմուրվաթ էն աս.
Բաս Յուլիանոսի զաթէն աս,
Լանդ Բարանէնց ջհուղներն:

Ինձի տանում ան ու խարում,
Կատուի աչկէրն ան կապում.
Խացն մէջ թաթին ան չափում,
Լանդ Բարանէնց ջհուղներն:

Հէնց տեսի միսն աղեցին,
Աչկիս դէմ տարան գաղեցին.
Բաղէր օղլուս խօշ դաղեցին,
Լանդ Բարանէնց ջհուղներն:

2. Հակագրութիւն

Նոքում մեռայ, տեղս ա ծմակ.

1) 2ի կտրուցում:



Ձվի պէս ձիք ամ, չվանի պէս կուլոսլակ,
Յերս աս գնում մին թաս գինու համար,
Բեզ պէս նախան մուշտարին հնի բիւնար,
Դվիթդար չիմ՝ քեզ ուղ ծախեմ,
Մգամ զանաթ ամ, որ քաղաթ ծախեմ,
Դու առուս:

Քալալ խէր խոյ չիմ, թէ հարախէտ գրկեմ,
Մգամ ես քարտաշ ամ, քո կապէն ներկեմ,
Սովդագար ամ, կուզես առտէրդ բրեմ,
Քառատ խոյ չիմ, քեզ լուղ ծախեմ,
Դու առուս:

Փապչկար խոյ չիմ, քեզ շինեմ քամար,
Չարվագար ամ, կուզես քեզ տամ ճանդ քար,
Կացիր աշփաղի շուքան բանամ,
Յայնժամ ասուղ կ'ծախեմ,
Դու առուս:

Փալվան խոյ չիմ, թէ գոմ ճրաքդ վառեմ,
Մգար ես բոշայ եամ, որ պաշտում առեմ,
Դալաք ամ, կուզես արախչիդ կարեմ,
Հալաջ խոյ չիմ, որ ես դուղ ծախեմ,
Դու առուս:

Բաղէր օղլուս քանի առ ես ըլթմաղ,
Մգար դասար ամ քե համար շինեմ սաղ,
Բրուտ խոյ չիմ՝ քե տաշեմ ալմաղ,
Ճղնաւոր ամ, քե ասուղ ծախեմ,
Դու առուս:

Ե.

Մ Ի Ի Ս Ե Ր Գ Ե Ր Ը

1. Առաջին եւ երկրորդ պոսկ

Մարդուս ազալ բազարն ասեմ,
Իւր կողակից եարի վերայ,
Մինն ոչ, հազարն ասեմ,
Ուրէնք քէրդբարի վերայ:

Առաջի բազարն մաղրութ ա,
Մարդի սրտի մէլ և ղուլթ ա,
Ալմազ, ջուահիր, եաղուլթ ա,
Գնոջ քամարի վերայ:

Յետինն բիաղալաթ ա,
Բաղախ ա, դոր ասեմ մաթ ա,
Մոջան չի, քարբար չի, ութ ա,
Պղնձէ քամարի վերայ:

Առջինն մին թարքայ ջուշ ա,
Գարնան ծաղկած փիշոտստ նուշ ա,
Հոտն առաւել անուշ ա,
Թէհան ու սուսամբարի վերայ:

Յետինն յաւել դիքայ ա,
Ղուի դոշակ չի, թաղիք ա,
Անտէր թամուշկած ծաղիկ ա,
Վերնկած անճարի վերայ:

Առաջինն մեխակ ա, ջազղ ա,
Փանջարով մարմարէ հալղ ա,
Դովրն չիման, մէջն սալղ ա,
Դոր սառն աղբիւր տարի վերայ:

Յետինն ով որ յինք կառնու,
Օրէց օր կնկանի դարու,
Նման ա մին պղտօր առու,
Խորտա ա գուլտարի վերայ:

Առաջինն մին բարատու ծառ ա,
Գարնան ծնած թաղայ գառն ա.
Բան օրհնեալ աստղն պայծառ ա,
Դոր շամս ու զամարի վերայ:

Յետինն արժան չի ծոցի,
Նման ա չափոստ սղոցի.
Էնպէս մարդի սիրան կ'խոցի,
Դոր նշտար տամարի վերայ:

Առաջինն ուրախութիւն ա,
Ջուխտն մին միս և արիւն ա.
Մարդի սրտին մէլ ու սոււն ա,
Շարթ ունի ևղբարի վերայ:

Յետինն ով էնթէզար ա,
Հալած իւր ջանէն քէզար ա.
Մէնտի, թաստի վատ աղար ա,
Ֆիքր ու զուսայ ջանի վերայ:

Բաղէր օգլիս ևս ասացի,
Ըստով երկու դուռ գնացի.
Յետինն ու առաջինն ասացի,
Իւրէնց քէրդբարի վերայ:

2. Տաղ Զուղու

Աստուծոյ օրհնած ա շէն ու բարդարար,
Թամամ տասնականին դաթարն Զուղու
Ամենայն քաղաքում յիշման մուղարար,
Թէ արհեստով, թէ խուսարհով նգարն Զուղու:

Արհեստով միջի մարդ՝ խոնարհով ան շատ,
Քսան չորս եկեղեցի, վանքն և անապատ.
Տէրտէր ու վարդապետ կանգնել հաղրէհադ,
Նրանց ծամ պատարագն ընի եարն Զուղու:

Ժամ պատարագով ա գոված Սպահան,
Թէ Զուղա, թէ Թաւրիզ, Գասկ ու Յարևան.
Ռաստայ խէրեան երկու տեղ Մէյդան,
Դուքանն փաքիզ ա բաղարն Զուղու:

Դուքանն փաքիզ ա, մարդիկն սափաթով,
Աղինին նստոտած ոսկէ սահաթով.
Սեռուսի ու սահֆա ինչ սանթանաթով,
Ոսկեով խալի ա նաղաշքարն Զուղու:

Ոսկեով խալիին ա զարդարած խալով,
Աստուած իւրէնց պահի դովլաթ ու մալով.
Եսիր ազատելով, ողորմութիւն տալով,
Փրկւի ամէն մի նաղարն Զուղու:

Նաղար դու հեռանաս, անձար չմնաս,
Ասպահան քաղաք դու յաւիտեան մնաս.
Ողջ սահաբ շօհուր, ջաւահիր դնաս,
Գոված ա սառաֆն ու օմսարն Զուղու:

Սառաֆն ու անաֆ յուշեար—զգաստ ան,
Տասն բաղի, չոք կողմն զօլ ա ու գօլտան.
Ով ուղում ա տանն տանի Հնդստան,
Կամ մաշն, կամ միւէն թառարն Զուղու:

Թառարն ու միւէն ողջ վերայ կ' ծաղկի,
Թութի մէհնա բլրուն գայ վերէն թառի.
Ով ուղում ա Զուղու թաթաշէն առի,
Երթայ ընի մեր Սոֆի սարն ի Զուղու:

Սոֆունն հօսն ունի յաւ կերն ու խումր,
Վեր գոն հանգստունն անեն պաշտումր.
Ֆռանց ու Ռուստն, Ղօլղօլ ուսումն,
Ողջ ընթզար ան ելել, գրթթարն Զուղու:

Ընթզար ան, նստեն դօստ ու մէհմանով,
Գինի ածեն, խմեն հաղիղաթ բանով.
Մազն էլ կ'ճղեն աջար դիւանով,
Իլլաիմ Սահակ քեալանթարն Զուղու:

Սահակ քեալանթարն սրտցաւ ա, տէր ա,
Աղինոնց խէտ սէր ա, բիշարոնց խէր ա.
Արիւնք, Արևմուտք Գօլթէրվ ծէր ա,
Բանի ա չորեք կողմն սովդգարն Զուղու:

Սովդգարն բանի կա, դուս գոն նաւէրն,
Կուշտացնի քօռ ու անգալ կաղէրն.

Գարունը լուսանա, խոտ դոյ բաղէրն,
Բացունեն ծաղկունքն գոլշարն Զուգու:

Գոլշար ծաղկունքն բացեն ամէնը լայիզ,
Անուշ հոտեն, փառաւորեն խայլայեզ,
Զուգու նման չկայ հարգիզ ոչինչ տեզ,
Թէ ելնի Հալարում, լամ խորդ եղբայրն Զուգու:

Հալար ու Մարգան, Բանդար, Մոսկոֆն,
Խաղաղութիւն նաւին, դադարի ծովն,
Քէզիսուդա, քեալանթար թագաւորովն,
Էլ Աստուած պահի հաւատարն Զուգու:

Հաւատարն դրիստ ա, մէջն ա լսունն,
Մեզ հասանի Աստուծոյ ողորմութիւնն,
Ուժիտվար ենք՝ գտնենք ս. զօրութիւնն,
Մեզնից հեռանայ դարդ ու սարն Զուգու:

Զուգա ամենայն քաղաքի ալամ ա,
Փչանայ վատ մարդն, որ մարդի զալամ ա,
Գովասանութիւնն ա երկու քեալամ ա,
Ասա Բաղրամ օղլի Ղազարն Զուգու: 1)

ԱՇՈՒՂ ՂՈՒԼ ԱՐՋՈՒՆԻ

«Ղուլ էղազ և Ղուլ Արզունին,
Աշդու երկու մեծ օրենքին,
Միշտ իւրեանց բանին ձէն ունին,
Հարուստ ձեռքալու նման»

Պարսկահայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ յիշուած է նաեւ Ղուլ Արզունին, որի ոչ կենսագրութիւնն է յայտնի, ոչ էլ ծննդեան և մահւան թւականները: Մերունքներէ ասելով՝ թէ և նա մի հասարակ աշուղ է լինում, բայց իր բանաստեղծական ձիրքով սիրելի է դառնում իրեն շրջապատողներին: Մանկութենից սովորում է աշուղութեան արւեստը (թէ ուժ մօտ յայտնի չէ) և միաժամանակ երգեր ու բանաստեղծութիւններ է գրում Ղուլ Արզունի մականունով, որոնք մի՞նչ հաճուքով են կարդացւում իր ժամանակակիցներից:

Շատ չէ Արզունու բանաստեղծութիւնների թիւը. նրա քնարից մեր ձեռքը հասել են ընդամենը եօթը քերթւածներ, որոնցից երկուսը՝ «Մեղայ Տէր» և «Ղարիբ տեղ նաչաղ եմ», տպւած են յայտնի գրականագէտ և խմբագիր Մեսրոպ Թաղիադեանի «Ազգասէր»-ի (1846-6, թիւ 19 և 21-ի) մէջ, իսկ հինգը գեո անտիպ են: Նրանք իրենց բովանդակութեամբ կրօնական են, որոնց մէջ երգիչն արտասուգին ողբում է իր մեղքերը, յոյց է տալիս պանդխտի կեանքի դառնութիւնները և ժամանակի հայ կեանքի տըխուր պատկերը: Այդ երգերից ամենանշանաւորն է «Մեղայ Տէր» խորագրով կրօնական չքեղ բանաստեղծութիւնը, երգիչն իր աչքերի առաջն է պատկերացնում անցեալի կեանքն և զգում է իրեն մեղքերի ծովի մէջ, ապա դատաստանը միտ բերելով՝ արտասուալից և ջերմ հայցածքներով դիմում է Աստծուն և թողութիւն հայցում իր այն մեղքերի համար, որ գործել է գլխով, աչքերով, ականջներով, քթով, բերանով, չար սրտով, չար մտքով, ձեռքերով, ոտքերով և վերջապէս համայն մարմնով:

Աչքքս մեղայ՝ ինչ որ տեսի ցանկացայ,
Աշխարս տվին ինձ դէռ չըկուշտացայ,
Իմ անօրէն մեղքքն՝ մին օր չըլացայ,
Մեղայ Տէր, փուշման ամ ես իմ մեղաքէն:

1) Թաղեր օղլու երգերի մէջ դանւած տառաւորները վերհրատարակած են տնօրէն, իսկական ընտրի համաձայն:

Ոտոքս մեղայ՝ չար ճանապարհ գնացի,
Անզգամ ման եկի, անյագ շնացի.
Վա՛յ ինձ առանց բարի գործոց մընացի,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Ուշադրութեան արժանի է նաև Արզունու «Ղարիբ տեղ
նաչաղ եմ» բերթեաժը: Երգիչը ծանր կերպով հիւանդացել է զա-
րիբ երկրում և զգում է, որ պիտի մեռնի, ուստի ցանկանում է
«խոստովանել», բայց օտար այդ երկրում ոչ եկեղեցի կայ, ոչ
էլ քահանայ, և նա յուսահատ դիմում է Աստծուն և իր ծով
մեղքերի համար թողութիւն հայցում:

Ղարիբ տեղ նաչաղ եմ՝ հալըս փէրիշան,
Քանի որ կենդան եմ՝ մեղայ Աստուծոյ.
Սուրբ եկեղեցի՝ քահանայ չըկայ,
Տէր Քեզ խոստովանիմ՝ մեղայ Աստուծոյ:

Գոչեմ մեղայ Տէր իմ՝ Աստուած ողորմած,
Բարերար բազում ողորմ և գթած.
Մեղաւոր Արզունուս տնւր հոգևոր հաց,
Հետքս պաշար տանեմ, մեղայ Աստուծոյ:

Աւելի հետաքրքրական է Արզունու «Մեր ասկն յիմարացել
ան» խորագրով քերթեաժը, 50 տուն, որի մէջ երգիչը մերկացնում
և մտրակում է ժամանակակից հայ կիանքի թերութիւններն
ու պակասութիւնները: Ահա մի քանի կտորներ.

Մեր ասկն յիմարացել ան,
Շուտով փչանալ ան ուզում.
Ուրախութիւն, սէր թողէլ ան,
Յիրուր զլուխ լալ ան ուզում:

Քոխցր լեղւով յիրուր խաբում,
Ջնջւով մինդմինու կապում.
Յիրուր դիւի կրակ թափում,
Երվել, սէվանալ ան ուզում:
Դամ՝

Այլ ասկն էնդուր ա զօրաման,
Որ յիրուր արոււ չեն բաման.
Մեղնէ թէ մինն վէր ա ընկաման,
Ողջ ուրախանալ ան ուզում:

Օրէնքինց, ժամինց թուլացել,
Մեծ ու պստիկ յերես բացել.
Ինչ օրէնք ա մնացել,
Էն էլ լվանալ ան ուզում:

Բացի սրանցից՝ Ղուլ Արզունին ունի նաև «Գրիչ», «Սուա
բարեկամ» եայլն: Նրա լեզուն բաւական մաքուր է և գրւած է
Նոր—Ջուղայի բարբառով:

Նոր—Ջուղա.

Արամ Երեմեան

ՊԵՏԱՌԻԿՆԵՐ ԱՐԶՈՒՆՈՒ ԵՐԳԵՐԻՑ

1. Մեղայ Տէր

Ի՛նչ Սուրբ աւազանէն՝ չուր այսօր վա՛յ ինձ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն.
Եօթն մահացու մեղք՝ բոլորն գոյ ինձ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Գլխովս մեղայ՝ հպարտ ամ կացել,
Դուռն եկեղեցւոյն՝ թողէլ, անց կացել.
Գնացել չեմ խոստովանէլ, զըջացէլ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Աչօքս մեղայ՝ ինչ որ տեսի ցանկացայ,
Աշխարհս տվին ինձ՝ դեռ չըկուշտացայ.
Իմ անօրէն մեղքն՝ մին օր չըլացայ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Ականջովս մեղայ՝ շինէլ չարի բուն,
Ականջ ամ ես դրէլ՝ օր չուր երեկոյն.
Պայծառ հոգիս մթնէլ՝ դարձէլ սևագոյն,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Գրնթովս մեղայ՝ քաշէլ անոյշ հոտ.
Յոր տեղ որ տեսէլ ամ նաչաղ ու բորոտ,
Խիալ ամ տարէլ, չեմ գնացէլ մօտ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Բերանովս մեղայ՝ քուֆր, յուշունց տալով,
Սուտ բամբաս անելով՝ դուրս պտուտ գալով,
Շարաթ չուր կիրակի անժամ կենալով,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Չար սրտովս մեղայ՝ շատ սիրտ ամ խոյէլ,
Սուտն աղորդ ամ շինէլ՝ աշխարհս լըցէլ,
Տասն պատգամք թողէլ, ինձ ամ կորուսէլ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Չար մտքովս մեղայ՝ գնացէլ մոլոր,
Սէվ սէվ թօն ամ շինել՝ մէջն ընկէլ ոլոր,
Իմ մեղքն բռնած ա աշխարհս բոլոր,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Սրտովս մեղայ՝ հեռ, նախանձ ամ պահէլ,
Յաւուր դատաստանիցն ես չեմ վախեցէլ,
Քէնըն օխց ամ շինէլ՝ շինքէս կախէլ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Ձեռքս մեղայ՝ զրկէլ, քաշէլ ամ բերէլ,
Մարմինս կրակ ամ շինէլ, խեղճ հոգիս երէլ,
Պաք ու ծով չեմ պախէլ, շան նման կերէլ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Ոտքս մեղայ՝ չար ճանապարհ գնացի,
Անդգամ ման եկի, անյագ շնացի,
Վայ ինձ առանց բարի գործոց մնացի,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Համայն մանմնովս՝ մեղքում կորէլ ամ,
Աշխարհիս չար բանէրն՝ ողջ սովորէլ ամ,
Քրիստոնէի կարգից՝ ես մոլորվէլ ամ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Հոգիս թողի, փուշ մարմնոյս տուի ամակ,
Իմ չար գործն շատ է, քան ծով ու ցամաք,
Ո՞վ սուրբ Աստուածածին քեզ ունիմ քոմակ,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Հայր, Որդի, Հոգի Սուրբ, մի օրինակ ես,
Ծնմարիտ կարող ես՝ բանաս ու փակեա.

Ամենայն մեղօք՝ կապեալս արձակես,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

Դատաստանն միտ բերի՝ նստայ ու լացի,
Մեղաւոր Արգունիս՝ խոստովանքս ասցի,
Ինչ որ ունի թողի ու մերկ գնացի,
Մեղայ Տէր, փոշման ամ ես իմ մեղացէն:

2. Ղարիբ օեղ նաչաղ ամ

Ղարիբ տեղ նաչաղ ամ՝ հալս փէրիշան,
Քանի որ կենդան ամ՝ մեղայ Աստուծոյ,
Սուրբ եկեղեցի՝ քահանայ չըկայ,
Տէր Քեզ խոստովանիմ՝ մեղայ Աստուծոյ:

Մեղայ քո ամենայն՝ սուրբ պատուիրանաց,
Շատ մեղք ամ ես գործել՝ ընդդէմ օրինաց,
Հայր երկնաւոր Աստուած՝ ճար մեղաւորաց,
Անդեղջ չմեռանեմ, մեղայ Աստուծոյ:

Տէր իմ և Աստուած՝ փառք քեզ գոհութիւն,
Տուր ինձ զղջում բարի՝ գործք և արքայութիւն,
Իմ անօրէն մեղացս՝ շնորհեա թողութիւն,
Մեղացէս փոշման ամ, մեղայ Աստուծոյ:

Մի թողուր զիս Տէր՝ ձեռաց Աջի քո,
Վասն սրբոյ անարատի խաչի քո,
Հայր մեղայ յերկինս և առաջի քո,
Թողութիւն գտանեմ՝ մեղայ Աստուծոյ:

Գոչեմ մեղայ Տէր իմ՝ Աստուած ողորմած,
Բարերար բազում ողորմ և զթած,
Մեղաւոր Արգունուս տուր հոգևոր հաց,
Հետս պաշար տանեմ, մեղայ Աստուծոյ:

3. Մեր ասկն

Մեր ասկն յիմարացէլ ան,	Ջրէրանին լի որումն,
Շուտով փչանալ ան ուզում.	Խոր բորողն էլ խորումն.
Ուրախութիւն, սէր թողէլ ան,	Սովազարն էս օրումն,
Յիրուր գլուխ լալ ան ուզում.	Բէգութեան աղբալ ան ուզում.

Բէշնամ էլէլ Հնդստան,
Յամէն փուշ բան շինում դա-
տաստան.
Ընկաման ան դիվան դատաստան,
Կոբլ, զալմաղալ ան ուզում,
Լէվ ա, որ թագավոր, խան չեն,
Օտար ասկից ամանչման չեն.
Մինգմինու խոնարման չեն,
Փէրիշան մնալ ան ուզում:
Ճշմարիտ բանին չեն դարուել,
Ինչ առում ան նամաղուլ.
Յորտեղ տեսման բարեափաւ չը-
ղուլ,
Խոռուրն միանալ ան ուզում:
Ընդունում չեն սովդագարի,
Որ ճշմարիտ խօսի բարի.
Ընկամ ան ձեռն ասկ օտարի,
Փող խաղալ ան ուզում:
Յրմայման չի էտոնց մանին,
Յետեմում ան չար քանին.
Կորցուցել ան խելքէրանին,
Նահախ յիմարանալ ան ուզում:
Մեծ ու պատիկ էլ ու փանդում
Կովիլ է մին մաղի բանդում.
Նահախ յիրուր տուն ան քանդում
Դառն ախքատանալ ան ուզում:
Ողջ բացել ան կովի բաղար,
Դոնէ դուռ շինում մանդար.
Խէրուրն թարքմանում զղար,
Հոգի ուրանալ ան ուզում:
Համէքն նստել ան մին պուճա-
խում,
Սուտ, սուտ գիր ան շինում.
Պախում կոբլն մինգմինու ծա-
խում,
Համիշայ ջնջալ ան ուզում:
Յեփ դատաստան ան դնաման,
Յիրուր արու աւ շարմ ան բաման,
Սողոմայ քաղաքի նման.
Մին էլ յետ միանալ ան ուզում:

Կոռտումն յիրուր պրպտում,
Աւետարան ան խորտում.
Ճշմարտութիւնն ստրտում,
Սատանոց խաղալ ան ուզում:
Գօմշի նման ունեն կողն,
Յիրուր գլխի տալման խողն.
Ուրէնց դառն դատած փողն,
Օտար ասկի տալ ան ուզում:
Ափսոս չէք գոլման ձեր փողին,
Չուր յեփ վաղ տէք դուռ դրօշին.
Ճշմարիտ մեկն խօսողին,
Բերան կապած լալ ան ուզում:
Չում ճանանչում չեք էք դուռն,
Որ ջուկն ձեր մեկն ծուռն.
Դանախն խառէլ ոսկուռն,
Դեռ նոր յիմանալ ան ուզում:
Ով չարմ ունի՝ առում ան ախ-
մախ ա,
Շառն յեղվէրանին կախ ա.
Բռնում մինգմինու եախայ,
Դոնէ դուռ ման դոլ ան ուզում:
Քոխցր լեզվով յիրուր խարում,
Չնջով մինգմինու կապում.
Յիրուր գլխի կրակ թափում,
Երվել, սէվանալ ան ուզում:
Ման ան գոլման ամեն տեղ,
Ուրէնց նշանց ան տալման անմեղ
Յորտեղ մտման ան քաղաք ու
գեղ,
Քանդելն ալալ ան ուզում:
Միթէ ուրէնք յիմաման չեն,
Մինգմին լէվ կու ճանանչեն.
Ուրէնց շարմին ափսոսման չեն,
Խալխի մօտ բանալ ան ուզում:
Մին կուպատահէր զղար տարէն
Հալ տեսման ամ խինդ տարէն.
Աշկարայ սանաղ դփտարէն,
Հալայ հետ դառնալ ան ուզում:
Խալալ-խարամն յիմաման չեն,

Ճշմարտութիւնն դո՞ր ճանանչեն.
Վերջումն ամանչման չեն,
Ախ քաշել, տկալ ան ուզում:
Յուսաման ան այլ ասկ օտարի,
Մինգմինու տալման քարի.
Օվ ճշմարիտ խօսէց բարի,
Վերէն չարանալ ան ուզում:
Քննում ան ծուռ ու գերան,
Մինգմինու խում-խում կերան.
Չուր ընկան այլ ասկի բերան,
Դառ էլ յիմանալ ան ուզում:
Ման ան գոլման սուտ-սուտ դալի
Գրէր խանում անիրավի.
Նրդում ուտում նման փլավի,
Կանուխ խօշանալ ան ուզում:
Օխի չար ճերմակ կաթնումն,
Ուրէնց արվեստն յադնումն.
Գոխտիկ ախքորաց մատնումն,
Բիխրար հաֆալ ան ուզում:
Տակախան թուր, դանակ արում
Ծառն քօքէն կարում, բորում.
Յերեսախան սուտ-սուտ ջրում,
Յետ զվարթանալ ան ուզում:
Այլ ասկն էնդուր ա զօրաման,
Որ յիրուր արու չեն բաման.
Մեղնէ թէ մինն վէր ա ընկաման
Ողջ ուրախանալ ան ուզում:
Ինչ ասկ բերենք մեղ օրինակ,
Մինգմին գձում կրակ.
Ախքորաց տալման ստաց տակ,
Ծիծաղել, խնդալ ան ուզում:
Յերեսախան քոխցր, խամեղ,
Մեծ բարեկամ դառնան անմեղ.
Չուր վերջումն գձեն մին նեղ տեղ,
Նատիլ սուտ հոգալ ան ուզում:
Մարթ խարում, քոխցր բերում,
Չուր տառն մատ մոմ շինում.
Վերջումն ամակ փուշ ան առում,
Դառ մնաթ բանալ ան ուզում:
Ձին վաղման ա բոչին գողին,
Անգղամ ուտող, խմողին.
Սակի լէվութին առողին,
Ամակն ուրախանալ ան ուզում:
Աշկէրանիտ դրիստ բացէք,
Ձեր դօստ ու գիշնամ յիմացէք.
Հորտեղ չար կայ՝ հերկար կացէք,
Ձրուց գողանալ ան ուզում:
Բադնամք վաղման յամէն բանում,
Կոտրում էլ ուր ասկի անում.
Երկու կողմէ որում ցանում,
Կոբլ ձգանալ ան ուզում:
Մարթ կայ յէնց ա սառած կարիճ,
Տակախան ունի մուտար կիճ.
Բերանն աշխար սպանիճ,
Լեզվիցն արուն կթալ ան ուզում:
Էնդուր ան մնացել անտէր,
Որ մինգմինու հետ չունեն սէր.
Թէ մինն դառման ա փողատէր,
Տրտմիլ, սգալ ան ուզում:
Բարակէլ ան, դոր մին մաղ ան,
Յիրուր տուն քանդելն վաղ ան.
Հէնց ան դառցել վուլ ու դաղան,
Մինգմին որալ ան ուզում:
Փող խալջում, ընկամ ան կողին,
Քարկոծում ան մեկն ասողին.
Ընկերաման ան խեղ գողին,
Բամբասում ան ուրէնց ծնողին.
Պատճառ դնում կարդացողին,
Տրտում կսկծալ ան ուզում:
Յամէքն մի թեվով թուլում,
Չուր ան կապում խեղքէր դոջում,
Գոխտիկ խալխի տուն ան շրջում,
Աշկարայ զղջանալ ան ուզում:
Բանի մին կան կորած դաշտի,
Աստուած մեղ խեղ էլ դոր խաշտի
Այլ ասկ՝ քուրթի, կապաշտի,
Բանի ալատալ ան ուզում:
Չարի սրտումն յանց ա կալման,

Աղօթք առում սուտ սուտ լալ-
ման. Եղեղեղու զրուցն աղօթք թողման
Ուխտն փախնած կուլ ան տալ-
ման,
Այլոց ազալ ան ուզում:
Համէքն բռնել մին մահանայ,
էլ ինչ օրէնք, ինչ քահանայ,
Յորտեղ տեսման դեմ, սատանայ,
Խոտերն ընկերանալ ան ուզում:
Օրէնքից, ժամինց թուլացել,
Մեծ ու պստիկ յերես բացել.
Ինչ օրէնք ա մնացել,
էն էլ լվանալ ան ուզում:
Յեկ մտման ան Աստուծոյ տուն
Սրտէրանին սէվ օխիլ բուն.
Յիրուր տալման սուտ-սուտ ող-
ջուն,
Խեղճատանք զղջալ ան ուզում:
Կանկրման ան դէմ սեղանին,
Լսում չեն սուրբ ավետարանին.
Անարգում ան խեղճ քահանին,
Նահախ ոչինչանալ ան ուզում:
Սաւորել ան մինդմինունց նստման

4. Գրիչ

Գրիչն գովեմ մին զամիշ ա,
Գտուղն պատուական եմիշ ա.
Ձեռնումդ պախիր համիշայ,
Ոսկով բռնած մօհրի նման:
Գրիչն ինքնին զուարթ ա,
Անուշախոտ կարմիր վարդ ա.
Ո՛վ կարող ա գրի, կարդայ,
Պիտի պախի փրի նման:
Գրիչն պիտի պախեն զարթուն
Չնի բաց թողուն, մնայ իբուն,
Մին դոստ կը քանդի մարդի տուն
Նւ փուլ եկած կրի նման:
Գրիչն յէնց ա լալ հրեշտակ,
Տնէր շուռ կայայ տակէտակ.
Իւրն կըաչի մին որմատակ,
Աներեւոյթ սրի նման:
Գրիչն ինքն ունի չափն,
Չնի խաբուես, կտայ խաբն.
Թէ որ գծի քեզ իւր հափն,
Կուտի չամիչ ջրի նման:
Գրիչն մարդարիտ կարծի,
Միշտ կուղի քաղաթ շարժի.
Ով որ կամենայ լաւ վարժի,
Գրի, կարդայ ջրի նման:

Գրիչն բանդ ա մին մազի,
Ո՛վ որ խտուրն չսազի,
Նահախ դէս ու դէն կըվազի,
Մին ախմախ գծի նման:
Գրիչն աշխարհ չափող ա,
Համ սովդագար, համ գող ա.
Ինչ որ ձեռնէն վեր գոյ, կարող ա,
Թագաւոր վէզրի նման:
Գրիչն յեկ փէրիշան ա,
Չոր զամբարն վատ նշան ա.
Ընկերացէ կ'քաշանայ,
Կլինի ֆաղիբի նման:
Գրիչն բնկեր ա խեղ դողի
Ղաճքաբով աշխարհ կաղողի.
Հոգի կտայ մին նաղդ փողի,
Մին զալուճ քաֆէրի նման:
Գրիչն որքան որ մաշի,
Յէնց ա քարգաղանի կաշի:
Ընչուր վերայ որ կվազի,
Կկտրի պանրի նման:
Գրիչն դժուար կհամբերի,
Գրիչն, ցերեկ պիտի գրի.
Յեկ քարկանայ՝ ծէրն սրի,
Գեարդան կտայ թրի նման:
Գրիչն երբ երիշ փոխէց,
Մին դոստ տեսի, որ ճոխէց.
Շլինք բռնէց, տակն կոխէց,
Մին կատաղած ջրի նման:
Գրիչն իմ կտայ ամակն,
Կսաւորի սև, ճարմակն.
Սարէր գծես գրչի տակն,
Կփշրվի ալրի նման:
Ղուլ Արդուս մըղամ դու իմ ես.
Գեո հուր ա չուր բան սաւորես.
Եթէ բոլոր աշխարհս դովես,
Չի խառաման գրչի նման:

5. Սուս բարեկամ

Երեսախան դոստի ունես,
Տակախան խառնաթղ վատ ա.
Որչանք որ որոմ կ'յանես,
էլ հախիրն աղբաթղ վատ ա:
Օխիլ նման ունես նաղար,
Ում խառաման աս, տալման աս չար.
Մեծ ու պստիկ ձեռնէդ բէզար,
Լաբս ու մարիֆաթդ վատ ա:
Էսօր որ լես մին զրուց,
Հարիւր կ'շինես մինչ հեկուց.
Լաւ էր, որ չեր ծնեալ մօրուց,
Խարամը կերած կաթդ վատ ա:
Ես հէնց զիտի մարդ իր մաղուլ,
Աշկարայ գառն աս և գողիկ գուլ.
Բերանդ աւեր և սուտ, սղալ,
Լիզուտ, արբաթդ վատ ա:



Սուտ բարեկամ Յուդա մատնիչ,
Որժատակին սառած կարիճ,
Մկան նման ապականիչ,
Արիւնդ պիղծ, զաթդ վատ ա:

Հէնց աս դու՝ ֆալս շինած զալբ փող,
Կեղծաւոր աս և մարդ խաբող,
Էդ չար ընութիւնդ թարգիր, բաց թող,
Սովորած խաւիւթդ վատ ա:

Ղուլ Արղունիս ասաց փարդով,
Աշխարքս քանդում ան նամարդով,
Ո՛չինչ շինում խօշամարդով,
Յեւի որ դիանաթդ վատ ա:

Բայի սրանցից՝ Ղուլ Արղունին ունի նաև լիազ 'ի վերայ
կալկաթոյ և լերդ Բանդալայի, որոնք սակայն աչքի ընկնող
արժանաւորութիւններ չունենալով՝ տպագրել չենք տալիս:

ՂՈՒԼ ՍԱՐԳԻՍ ՇՐԻՇԿԱՆՑԻ

Այս երգչի մասին կենսագրական տեղեկութիւններ չկան,
միայն այսքանը յայտնի է մեզ, որ նա ծնւել է Ապահանի Փէրիա
դաւառի Շուրիշկան գիւղում. թւականը յայտնի չէ: Ածելիս է
ևղել չօնգուրի վրայ: Սրանից մեզ հասել է «Շրիշկանցի Ղուլ
Սարգիս և տարեգիր իւրս կոչւած գողտրիկ երգը, 58 տող, որով
նա մեզ տալիս է իր մանկութիւնից սկսած մինչև ծերութեան հա-
սակի նկարագրութիւնը. Դա գրւած է միապաղաղ յանգերով և
նոր—Ջուղայի ժողովրդի խօսած բարբառով. Ահա այդ ոտանաւորը:

Եկէք երկու՝ բան ամ ասում¹⁾,
Ես իմ քարդէքարիս վերայ.
Մինէկ ինձնով չի, աշխարհով,
Թամամ էս աշխարհիս վերայ:

Երեսին ձեռս՝ առի թասն,
Խալիսի հետ ես՝ կառի բասն.
Սրտումս կէր՝ շատ հաւասն.
Մին չօնգուռ ու սազի վերայ:

Մին պուտ արիւնի ջուր ելայ,
Աստծանէ՛ դուր ելայ.
Ինն ամիս քօռ ու կուր ելայ,
Ջան եկաւ ջասաթիս վերայ:

Բառասին՝ զալագեցի,
Չար սատանին՝ խալաթեցի.
Ինչ որ ասաց՝ ես լսեցի,
Մին շարթ ու եղրարի վերայ:

Էն օրն որ՝ մօրուց ելայ,
Մէրն մարդի՝ սրտի մէլ ա.
Գիրկ ու ծոցով՝ ինձ պահէլ ա,
Ամակ ունի՝ ջանիս վերայ:

Յիսին էլ ես՝ սրտեղվեցի.
Չար սատանին՝ նալաթեցի,
Ասածանին՝ չըլսեցի,
Որ եկէլ էր ճամբիս վերայ:

Երեք օրումս՝ աչքս բացի,
Ով որ ծիծաղէց, ես լացի.
Լեզուս պըռնկիս մնացի,
Ազուդայ մանանի վերայ:

Վաթսունին էլ՝ ես նեղացայ,
Մեղաց բանիցն հեռացայ,
Չար սատանից՝ երկարացայ,
Շուռ եկայ ալամիս վերայ:

Հօր ու մօր ամակ չիմացայ,
Կիսաճամբի՝ մոլորեցայ.
Ամէն դարի՝ հանդիպեցայ,
Ես իմ քարդէքարիս վերայ:

Եօթանասուն՝ եօթն տարի,
Ես չեմ գործէլ՝ գործս բարի.
Ես իմ ձեռքս՝ մին խէր չարի,
Դատմունք աշխատանքիս վերայ:

Տասն տարումս՝ ուրախացայ,
Թաղայ ճուղկի՝ ծառի վերայ.
Քսան տարումս՝ մաղրուբացայ,
Սուսան, սմբուլ՝ բարի վերայ:

Եկաւ ութսունս լցվեցաւ,
Ճուղկ ու տերևս դաղալեցաւ.
Քամին տէց, վեր թափեցաւ,
Թամամ հող ու քարի վերայ:

1) 8-իս Մեսրոպ Թաղեղեանի «Ազգասէր» 1846, Թիւ 23, էջ 24.

նքսուներն էլ փթած ծառի,
 էլ ես մին բանի խէր չարի.
 Քիչուշ ու խաստայ բիմարի,
 Մին տեղ էր ու բարձի վերայ:
 Հարիւրն յիշենք Տէր ողորման,

Տէր ողորման, Տէր քեզ մեղայ,
 Բանդայ Սարգիս Քիւր էր չարի,
 Թամամվեցաւ հարիւր տարի.
 Ես էս աշխարհէս ինչ տարի,
 Գերեզման մանգարիս վերայ:

Մ Ի Ս Կ Ի Ն Ս Տ Ե Փ Ա Ն

Պարսկանայ աշուղներից ուշադրութեան արժանի է նաև Միսկին Ստեփանը: Ծնւել է նա 1868 թւին, Սպահանի Փէրիա գաւառի Ղաուղուն գիւղում: Նրա նախնիքները գաղթել են Հին—Ջուղայից, 1606 թւին, Ծահ—Արբասի ձեռքով: Ստեփանը շատ վաղ զրկւելով իր ծնողներից, մեծանում է մեծ կղզոր խնամատարութեամբ և ընտանեկան նեղ համագամանքների պատճառով՝ զրազւում է հողագործութեամբ: Տասներկու տարեկան հասակում ծաղիկ հիւանդութիւնից զրկւում է իր աչքերից: Այնուհետև իր գոյութիւնը պահպանելու համար՝ աշուղ Նազարի մօտ սովորում է չօնգուր անկը, ապա ինքնաշխատութեամբ առաջադիմում է:

Այնուհետև նա, կրթ լինում է 22 տարեկան, շրջում է Հայյաստանի զանազան կողմերը՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Էրզրում, Խնուս, Շամախի, Սարաղամիշ և այլ տեղեր և աշուղութիւն անում: ապա գնում է Մուշ—Ս. Կարապետ ուխտի, ուր գիշերը երազում Ս. Կարապետը տալիս է նրան մի թաւ. այդ թաւը նշան է համարում, որ ինքը Ս. Կարապետից ստացել է աշուղական շնորհքը: Դրանից յետոյ նա վերադառնում է հայրենիք և չօնգուրը ձեռքին շրջելով Քեաղազ, Քեամարա, Փէրիա, Զահարմահալ գաւառները, ինչպէս նաև Նոր—Ջուղա, իր երգերով ուրախացնում է իրեն շրջապատողներին:

Ամուսնացել է նա երկու անգամ և ունի երեք աղջիկ և մի տղայ:

Մենք տեսանք նրան Նոր—Ջուղայում և իր բերնից գրեցինք կեանքն: Երեսուն և վեց տարիներից ի վեր նա պարապում է աշուղութեամբ և հիւսել է ընդամենը մի հաւա հայերէն կրգ: Ընդհանրապէս նա երգում է Աշուղ Ղարիբի, Յարթուն օղլու, Ամիր օղլու և Տէր—Կարապետի երգերը: Նւագում է շատ լաւ չօնգուր և հակառակ իր ձերութեան, ունի բաւական գուրեկան ձայն: Ար-

տաքինով թուրամարթ է, ամրակազմ աւ բարձրահասակ. ունի լայն թիկունք, հաստ և ուժեղ բաղուկներ: Ահա նրա երգը.

Աղաչեմք մեր Ստեղծողից,
 էս տուն—օթևանն օրհնէ.
 Խնդրակատար սուրբ Աթոռից՝
 Ամենեցուդ կեանքն օրհնէ:

Յորդանան գետի քաւորը,
 էս ձիթնայ ճղնաւորը.
 Կիսուս անմահ թագաւորը՝
 Թագաւորի կեանքն օրհնէ:

Երկիր պագանենք Քրիստոսին.
 Բարեխօս գցենք սուրբ կուսին.
 Միջնորդ բերենք Յովհաննէսին՝
 Չոր որդկանց ումր ու արնն օրհնէ:

Երուսաղէմայ տաճարը,
 Կերկմանի մարմար քարը,
 Կանչենք Յակոբ սուրբ արդարն՝
 էս աղբրտանց կեանքն օրհնէ:

Ատածու որդի իջեալքը,
 Սրբազանոց օծեալքը,
 Երկու տասանք առաքեալքը՝
 Ամենեցուդ կեանքն օրհնէ:

Միսկին Ստեփան, արա ջանքն,
 Մտածիւր բարի մաղթանքն,
 Սրբոյ աթոռի օրհնանքը՝
 Չեր տուն—օթևանն օրհնէ:

Տ Ա Ղ Ղ Ո Ւ Լ Յ Ո Վ Հ Ա Ն Ն Է Ս Ի

Ն Ո Ր — Ջ Ո Ւ Ղ Ա Յ Ի Բ Ա Ր Բ Ա Յ Ի Ո Վ

(Յաւելած)

Աղամորդուս յառաջ սկիզբն դժի ա,
 Մոնջով չի խօսկանալ, բխարաւ կելնի.
 Ջուր ու արիւն միաւորութիւն իրար խէտ,
 չրամանաւ Աստուծոյ բարեբար կելնի:

Երկու տարումս ոտ կառնի իր ման գալն,
 Յիրեքումս կրացվի լեզուի խօսալն.
 Չոր տարումս կալածառանայ ջամալն,
 Խինգ տարումս կանթեղի պէտ վառ կելնի:

Բարեբար կմնայ մօր արգանդումս,
 Մարդոյ կերպ կլննայ արուն ու ցումս.
 Միս ու մորթի կառնի ծովի միջումս,
 մնշունչ, անհոգի, բխարաւ կելնի:

Վեց տարումս իր ու օտար կճանաչի,
 Օխտն տարումս կվախենայ, կամաչի.
 Ութն տարումս կպտկի, համ կկանանչի,
 Ինն տարումս ծառի վերէն բար կելնի:

Խաւարումս կմնայ ինն ամիս, ինն օր,
 Ընչուր կերպն թամամուի արգանդումս.
 Զուր ու հոգի կառնի, ծնունդ կելնի մօր,
 մշկէն կընայ, լուս աշխարհ կելնի:

Տասն տարումս կուզի իրան զարդարի,
 Տասներումս համգամ ընկնի կճարի.
 Տասնըրկըքումս իրան մարդ կհամարի,
 Տասնըլիւրքումս խօրն, մօրն եւր կելնի:

Բարեբարն հօգի կտայ, ջան կտայ,
 Սիրուն պատկեր, լուսոյ կերպ նշան կտայ
 Բերան կընայ, պանշուկն մտն կտայ,
 Գրգթայ մօր կաթն, ի՞նչ դալար կելնի:

Տասնընչոր տարումս կալածառանայ, ջան
 կընայ,
 Ջարայ—վարայ խելքն իրան բան կընայ,
 Տասնընչուրն փալէվանի պէտ ման կընայ,
 Տասնըվեցումս ջուշ ունի, անգաղար կելնի:

Մին տարումս դառ ոչինչ չի խօսկանալ
 չայլաց կելնի, անգէտ, յիմար, նաղան ա.
 Իր հրմօզն աղնի սուլթան ու խան ա,
 Գիշեր, ցէրէկ մօրն դարդ ու տար կելնի:

Տասնըթաւնին թագայ—թաղայ ջիան ա,
 Միտքն լաւ կրարուի, շատ բան կիմանայ.
 Տասնըթաւնին ինքնաղլուի տալան ա,
 Տասնըթաւնին անջափ բէրդաբար կելնի:

Քան տարումն կգոչայ զարնան շրի պէս,
Ում խէտ խօսայ, կփանդանի շրի պէս:
Իտրն օր գէնս կերթայ կարուկ թրի պէս
Աքունն ոսկրներն լաւ խունար կելնի:

Քան խնդրին մէջ խնդրին փառ կտայ,
Ինչ որ խաղնի, ում խէտ նոտի խառ
կտայ:
Ծառի նման քոյրքր ու անոշ բար կտայ,
Խօսկերն շուտհիր անգին քար կելնի:

Երանումն սիրտն ու ձեռն առատ ա,
Քրտեղ մին խնդն տեսնի, կուզի ազատէ:
Հարստութիւն կուզի, խնդիրքն շատ ա,
Մին դամ իշխան, մին դամ սովդազար
կելնի:

Երանուն խնդրին մին անուանի իշխան ա,
Գառարած, թամամուած բէլլու նշան ա:
Գաղատութիւն չունի, աչի ու միգան ա,
Ինչ որ ասի, խօսկին ըլտրար կելնի:

Քառասունումն ինքն իւր գէթին կականի,
Ին արած բաներն օղջ կփռւանի,
Մեխկն կմտածի, խոզէց կխանի:
Չարէն կհնոսնայ, բարերար կելնի:

Քառասունինգին միտքն ա բարի,
Իրն իրան կուզի, օտարն օտարի:
Գիմանայ ունայն ա զաղն աշխարհի,
Մին պատիկ մահիցն խաբարդար կելնի:

Յիսնումն կպակասի հէշխն ու հաւան,
Էլ աշկն չի գոլ աշխարհի հասան:
Գոր բլբուլն թունի մնայ զփառն,
Ինքն բողբոլն, ցաւազար կելնի:

Յիսունինգին ազարն իրան կխտորի,
Երունն կզաղարի, քամին կնստի:
Ոսկուռն կխախտի, ջանն կբժտի,
Մմենայն ցաւ գետրդանին բար կելնի:

Վաթնումն խօրաք կուզի, ջան կուզի,
Ազաթ, խորմաթ անող մէհրէբան կուզի:
Յշկէրին լուս, ձեռքին գաւազան կուզի,
Ծնկին կամ բաղանին հաւատար կելնի:

Վաթնունինգին կանք ունենայ, լաւ ա:
Մին մին սիրտն զաֆիլ վեր կուռնի հաւայ,
Մին դամ բանի կենայ, ջանն կցատայ,

Խինգ օր տեղով, բարձով միշտ տկար
կելնի:

Սխառնասնումն իվել ումր ա, օր կանի:
Գարողութիւն չունի հարդիզ մին բանի:
Էլ տեսութիւն չեն դս ազգ ու ընտանի:
Ինչպէս մին զարիւր, շատ օտար կելնի:

Սխառնասունինգին ջանն կխալուի,
Անկոնն չի լսել, ծունկն կծալուի:
Մէջկն կկեռանայ, միտքն կխալուի,
Մմէն օր մին ցաւի զրփտար կելնի:

Ութսունումն կերթայ բերանի ջուրն,
Աշկի լուսն, գլխի խնդն ու շուրն:
Դնտնի գերի կելնի, էլ չի զափտել իւրն,
Իրա ցաւն իրա ջանին դար կելնի:

Ութսունինգին կփլտուի կրի պէս,
Ջուրն ընկած աւերուած սաղայ գրի պէս:
Միտքն կցամաքի շոր աղբրի պէս,
Այնուհետ աղբրին շատ անճար կելնի:

Իննսունումն գոր մին փթած գերան ա:
Յրն մին բարաթ ցաւի կտիրանայ,
Ինչ Աստուած տուէլ ա. օղջ կվերանայ,
Մանկութեան նշանն գէմ ու դուշար
կելնի:

Իննսուն խնդումն տխուր ա բիղամաղի պէս
Թայանած, թափ տուած աշնան բաղի պէս:
Հիմն խախտուած, կտորած թաղի պէս,
Մին զաֆիլ փուլ կգոյ, խօվասար կելնի:

Իւրիւրումն անխափան կելնի վախճանքն,
Ճշմարիտ ա մահն, փուլ ա կեանքն:
Եթէ բարի լինի իւր աշխատանքն,
Հոգին կփրկի, շատ արդար կելնի:

Ի՛նչ փուլ Ազաթայ որդի, դու մին ծիլք
արա,
Քո մահն մտածիր, ունայն աշխարհ ա:
Մեծն ու պատիկ կերթանք օղջ վարայ
վարայ,
Խինգ գաղ կտաւ մեղի մին պաշար կելնի:

Ղուլ Յովհաննէս մին օր ջանդ կնգանի
գող,
Էլ քեզի դէմ չի գար հաւատար կամ փող
Մարմինդ խող ա, պէտք է գառնայ խող:
Հոգի դժբառ Աստուած ճանապարհ կելնի:

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ա. է.
Աբադ. շէն. մշակելի.
Աբասի կամ Ապասի. քսան կոպէկ
Աբարաթ. յատկութիւն.
Աբուռ. ամօթ, պատկառանք,
պատիւ.
Աղալաթ. արդարութիւն.
Աղաթ. պատուել, մեծարել.
Աղոնդայ. կերակուր, պաշար.
Աղար. ցաւ, ժանտախտ.
Ալամաշխարհք. երկիր.
Ալմազ. շողակն, ադամանդ.
Ախմախ. յիմար, տգէտ, անգէտ.
Ահվալ. դրութիւն.
Աղբալ. բաղդ.
Աղարկէլ. ուղարկել.
Աղբաթ. հանգամանք, նպատակ,
վախճան.
Աղբը. աղբիւր.
Աղբօր. կղբօր.
Աղինին. աղաներին, իշխաններին.
Աղիննն. աղաների.
Աղորդ. ուղիղ, ճիշդ, ճշմարիտ.
Ամ. եմ.
Ամալ. գործ, նեղութիւն, ճար.
Ամակ. երախտիք, բարերարութիւն,
վաստակ, ջանք.
Ամպրվէլ. փակել, կողպել.
Ան. են.
Անգալ. հաշմանդամ.
Անդիշայ. վախ.
Անխայ. անհայ.
Անք. ենք.
Աշկարայ. բացայայտ, յայտնա-
պէս, ակնյայտնի.
Աշուղ. ժողովրդական բանաս-
տեղծ-երգիչ.
Աշղնու. աշուղներ.

Աշփաղ. խոհարար.
Աջալ. ճակատագիր, վճիռ, օրհաս
Առուռ. հարս.
Առտ. արտ.
Ասկուտակ. աղգական.
Ասման. ասում են, ասեն.
Ասուլիս. բանակուիւ.
Ասուղ. ասեղ.
Ասդի. ասեցի.
Ավատալ. հաւատալ.
Ավալ. նախ, առաջ. սկիզբ.
Ավդալ. ցնորեւած, յիմար.
Արախի. հովակաւան վրանի մեծ
տեսակը.
Արարին. արին.
Արգ. փափագ. խնդիր, գանդատ.
Արեկակ. արեգակ.
Արկաթ. երկաթ.
Արուն. արին.
Աւարայ. դատարկ, պարապ.
Աֆլաթուն. Պղատուն փրկստփան

Բ

Բազար. շուկայ, վաճառափողոց.
Բալորէլ. բոլորել.
Բալքի. գուցէ, թերևս.
Բաղ. այգի.
Բադին. մնացեալ.
Բաման. բանում.
Բամբաս. զրպարտութիւն.
Բանացուին. բանեցրին.
Բանդ. կպած, կապ.
Բանդայ. մարդ, ծառայ.
Բաշ. գլխաւոր.
Բաս. վէճ, մրցումն. հապա.
Բասկի. այնքան.
Բատալ. փոխարէն.
Բար. առաջին երախայրիք.
Բարաթ. փոխանակագիր.
Բարատու. պտղատու, պտղաւէտ

Քարդայ. աստեան.
 Քարիշ. հաշտ, հաշտեւել.
 Քէզարդան. գլուխ գլխի վրայ.
 Քէզոսատ կամ բէկրատ. մահու-
 դի տեսակ.
 Քէդնամ. վատահամբաւ.
 Քէղար, յոգնած, ձանձրացած.
 Քէհթար կամ բեթար. վատթա-
 րադոյն.
 Քէնաղամ կամ բընաղամ. փա-
 րաւաճ, կեցցէ.
 Քէչէք. երեսաներ.
 Քիադալաթ. անարդար.
 Քիդամադ, դժգոհ, վերաւորւած,
 սրտամնայ, վշտացած.
 Քիխրար. անտեսելի.
 Քիհուշ. անզգայ, ուշաթափ.
 Քիմար. տկար, հիւանդ.
 Քիմուրվաթ կամ բիմուրվաթ. ան-
 գութ, անխիղճ.
 Քիչար. անճար.
 Քիչարոնց. խնդների, չքաւորների
 Քիստի. պարսկական զրամ,
 Քիփի. անազնիւ.
 Քլայ. հոգս, փորձանք.
 Քնօխ. որմնագիր.
 Քորոտ. վերքոտ, խոցոտ,
 Քուխտան. զրպարտութիւն, զը-
 րախօսութիւն.
 Քուչուլ. փոքրիկ.
 Քուրվարի. Սպահանի հայաբնակ
 գաւառներից մէկն է.
 Քրուտ. հողէ ամաններ շինող.
 Քօշայ. գնչու.

Գ

Գան. արիւն.
 Գանըն. մրդեղէն.
 Գեարդան. պարանոց, խպիպ.
 Գիթ. խնթ.
 Գիւլ կամ գօլ. վարդ.
 Գիւլստան կամ Գօլստան. վար-
 դանոց.
 Գլխամալ. զլխահարկ, տուրք.
 Գմնէ. կողմից.
 Գնաբան. գնոււմ.

Գնոջ. կնոջ.
 Գոլ. Գալ.
 Գոլման. գալիւս, գայ.
 Գոլչար. վարդանոց.
 Գոխտիկ. գաղտնի.
 Գողիկ խորամանկ.
 Գոն. գան.
 Գոնք. փանք.
 Գոս. գաս.
 Գորի. գարի.
 Գուդակ. թագ.
 Գուդար. շաւիղ, ձանապարհ.
 Գուլ. խաբեբայ, բթամիտ, բութ.
 Գուլաբ. վարդաջուր.
 Գուշայ. անկիւն.
 Գրֆթար. բռնւած, ենթակայ.
 Գօթըզօն. զերեզմանից զերեզ-
 ման.

Գօֆթար. խօսք.

Դ

Դաբրիշ. դէրվիշ, մահմեդական
 կուսակիւն հոգեւորական,
 որոնք ապրում են աղքատ.
 Դալաք. սափրիչ հասարակ տե-
 սակի, բաղնիստում լողացը-
 նող սպասաւոր.
 Դադել. այրել, խոցել, խարանել.
 Դամ. քէֆ, ուրախ վայրկեան,
 ցնծութիւն.
 Դանայ. հատիկ.
 Դառ. դեռ, տակաւին.
 Դառդակվել. դատարկել.
 Դառ էլ, դեռ եւ.
 Դաս. ձեռք.
 Դաստայ. փունջ, շարք, կարգ.
 Դավի. դատ.
 Դատ. բողոք.
 Դարբէղար. թափառական, դըռ-
 նէղուռն.
 Դարդմանդ. ձեռնաբաց, վեհան-
 ձըն, ցաւադար.
 Դարտ. ցաւ, վիշտ, հոգս, կսկիծ.
 Դաֆ ելաւ. փարատեցաւ.
 Դաֆաթ. խնջոյք, խրախճանք.
 Դիան. 50 դիանը մի շայի.

Դիանաթ. ընդունակութիւն.
 Դիդար. դէմք. երես, կատարե-
 լատիպ, իղէալ. սիրահար
 Դիլթար. սիրական, գեղեցիկ.
 Դիմաման. դիմանում.
 Դիշնամ կամ դուշնամ. թշնամի.
 Դիվան. դատաստան, դատարան.
 Դիքայ. պատառ.
 Դլսուգ. սրտկեղ, սրտցաւ.
 Դնջվել. հանգստանալ.
 Դովլաթ. հարստութիւն, ճոխու-
 թիւն.
 Դովր. շուրջ, շրջան.
 Դոր. ինչպէս.
 Դվիթգար. գրչագիր.
 Դրիստ. ուղիղ, ճիշդ, ստոյգ.
 Դուգ. ուղիղ, հարթավայր.
 Դուդն. քաղցած, անօթի.
 Դուկուն. խարան.
 Դուդ. թան.
 Դուշար. հանդիպել.
 Դուքան. կրպակ, խանութ.
 Դօշակ. ներքնակ.
 Դօստ. բարեկամ, սիրելի. ընկեր
 Վֆթար. մատենան.

Ե

Եախայ, օձիք.
 Եադի. թշնամի, հոգեառ, ոչնչա-
 ցնող.
 Եադութ. յակիւնթ, ակն.
 Եաթի. գերի, ստորուկ.
 Եար. սիրական, սիրուհի.
 Եմիշ. թաց միդդ, ձմրուկ, սեխ
 և ուրիշ խոշոր պտուղներ.
 Եղդար. խոստումն, պայման.
 Եսիր. գերի.
 Երհախան. երեսանց,
 Երէդ. այրից.
 Երիշ. բնթացք, գնացք, քայլաք
 Եքսան. միասին.
 Եւել. աւել.

Զ

Զաթ. ցեղ. առարկայ. իր.
 Զալթուկ, բրնձի հունձ,
 Զալում. չարածի, ճարպիկ.

Զահիր. թոյն.
 Զաման. ժամանակ.
 Զարար. փեսա.
 Զարբ. բարկութիւն, հարւած,
 զարկ, ոյժ.
 Զաւալ. փորձանք.
 Զընել. անարգել. խիստ անպա-
 տիւ անել.
 Զըմպովել. ամրանալ.
 Զենաթ. արծաթեղէն, ոսկեղէն.
 զարդարանք.
 Զիրու, վայրի վերոյ.
 Զհուր երևան գալ,
 Զուլմ. փորձանք, պատուհաս, չա-
 րիք.

Է

Էդչանք. այդչափ.
 Էն. այն.
 Էնդամն. այն ժամանակ.
 Էնթէգար կամ ընթգար, կարօ-
 տանք, տարփանք, սպասել.
 Էնչափ. այնչափ.
 Էնց, այնպէս.
 Էս. այս.
 Էստիյետ. այսուհետեւ.
 Էսօր. այսօր.
 Էվոլա. մաշալլայ, կեցցէ.
 Էտուր. դրա.
 Էրեկ. եկն.
 Էրետ. տեկ.

Ը

Ըլթմաս. աղաչանք, աղերսանք.
 Ընգաւ. ընկաւ.
 Ընկաման. ընկնում.
 Ընչուր. ինչու, ինչքանի.
 Ըռուգար. քամի.
 Ըսկեանջայ. գանձատուռն.
 Ըստով. սրանով.

Թ

Թարին. ստորադրեալ, վոհմակ.
 Թազայ. թարմ, նոր, թափա.
 Թալար. պահանջ.
 Թալաբ. թակարդ.
 Թախսիր. սխալութիւն, յանցանք

Թաղ. Թումբ բանջարանոցի, կամարակապ.

Թաղաթ. ոյժ, կարողութիւն, համբերութիւն.

Թամամ. բովանդակ, լրիւ, Թամաշայ կամ Թամաշէ. տեսարան, հանդէս.

Թամբալանալ. ծուլանալ.

Թանխա, մեծախոսութիւն, խոստումն, երաշխաւորութիւն.

Թանխա տալ. յուսադրել, գովասանել, պատճառաբանել.

Թառբար. Թարմ մրգեղէն կամ բանջարեղէն.

Թաստ. Թարմ մրգեղէն կամ բանջարեղէն.

Թարքել. բաց թողնել, հրաժարւել թիր. ցատումն.

Թուման, պարսկական 10 դռն, ռուսական 10 բուրլի.

Թուր. սուր.

Թումար. ականակուռ.

Թօռ. ուռական, Թակարդ, որոգայթ

Ի

Իգին. այգին.

Իլայի կամ Իլլաիմ. նամանականդ,

Իղրար. խոստումն, դաշն.

Ին. էին.

Իր. էիր.

Իւել. աւելի.

Լ

Լաբա. խօսք.

Լալ. կարմրագոյն, վարդագոյն Թանկագին քար.

Լալման. լալիս. սուտակ.

Լայեղ. արժանի, վայել, պատշաճ

Լանդ. դանդաղ, կաղ.

Լաշ. գէշ, դիակ, մարմին.

Լափել. յափշտակել.

Լեղակ. մշկան եղիճ, հնդիկոն.

Լէւ կամ Լէվ, լաւ.

Լողման. հին դարու հոգակաւոր բժիշկ է.

Լուս. լոյս.

Լօռ. լեռնաբնակ մի աղդ է.

Խ

Խաթիրջամ. ապահով, վստահ, միամիտ, անվրդով, անդորր.

Խալալ. հալալ, արդար, սուրբ. Խալայեղ. նաժիշտ, ժողովուրդ.

Խալի. գորգ.

Խալիս. ժողովուրդ, բազմութիւն.

Խամ. համ.

Խայ. հայ.

Խայաման. հայանում.

Խան. տիրողոս՝ բարձր պաշտօնեաների, իշխան.

Խանել. հանել.

Խանչկէլ. մարել, հանգչեցնել.

Խաշտ. հաշտ.

Խառատ. հիւսն.

Խասաւ. հասաւ.

Խասիաթ. բնաւորութիւն.

Խաստայ. հիւանդ.

Խարար. աւերակ, քանդւած.

Խարամբւած, փչացած, հարամւած

Խաց. հաց.

Խափ կամ Խաբ տալ. խաբել.

Խաքու. հողի հաւասար.

Խաֆաթ. գաղտնի գործողութիւն

Խրար. տեղեկութիւն, լուր.

Խէպառտանալ. ամբարտաւանալ.

Խէտ. հետ.

Խէր. հայր, բարիք, օգուտ.

Խէրիք. հերիք, բաւական.

Խէրուր. հարիւր.

Խէրեան. պողոտայ.

Խիալ. կասկած, վատ միտք.

Խինայ. հինա բոյսի փոշիացրած

տերեւ, որով մազն ու ձեռքերը

կարմիր գոյնով ներկում են.

Խինգ. հինգ.

Խոգէց. հոգոց.

Խոզ. հոզ.

Խոր. հոր.

Խում. հում.

Խունավար. ընտանիք.

Խունար. խոնարհ, ձիւք, շնորհք,

տաղանդ.

Խսար. հաշիւ.

Խտուր. իրար հետ. միասին.

Խօլի. դատարկ.

Խօշ բարի, դիւր, լաւ, հաճոյալի.

Խօշամարդ. հաճոյախօսութիւն, հաճոյանալ.

Խօշխալանալ. ուրախանալ.

Խօշիշին. հողագութիւն գիւղացի.

Խօշնալ. ուրախ, զւարթացէմք.

Խօվ. հով.

Խօրաք. կերակուր.

Մ

Մամ. մազ. հիւս.

Մէր. ծայր.

Մմակ. անտառ, արեգակ չըղիպչող տեղ.

Կ

Կանկրման. կանգնում.

Կանցէն. քան թէ այն.

Կապէ. շապկի վրայից, վերարկուի տակից հագնելու երկար դգեստ.

Կառի. առնել.

Կեռաման. կեռանում.

Կեռք. ատամ.

Կէր. կար.

Կիսամորթ. կիսամեռ.

Կուլ. վիզ.

Կուլուլակ. կլորակ.

Կուռ. պահապան, բազուկ.

Կուս. կոյս.

Կուր. կոյր.

Կօռտ. դատաստանատուն.

Հ

Հաղդ. համարձակութիւն, սիրտ, իրաւունք.

Հաղթէ հատ. հատիկ, հատիկ.

Հաղ անել. սիրել, հաւանել.

Հալ. կարողութիւն, դրութիւն,

վիճակ.

Հալբաթ. իհարկէ, գուցէ, անշուշտ, հարկաւ.

Հալաջ. անճար. գգրար.

Հախ. իրաւունք, արդարութիւն, վարձ.

Հախիրն. վերջը.

Հաղիղաթ. ճշմարիտ.

Համէն. ամենայն.

Համէքն. բոլորը.

Համիշայ. միշտ, մշտապէս.

Հավաս. տրամադրութիւն, ցանկութիւն.

Հավզ. աւազան.

Հարախէ. երեսայ.

Հարամ կանանոց, պիղծ.

Հարգիդ. բնաւ, ամենեին, երբէք.

Հարչայ. սնոտի, անհեթեթ կամ

անիմաստ խօսք.

Հափ. ափ, ձեռք, երախ, բերան.

Հաքամ, քաղաքագետ.

Հաքիմ. դատաւոր, բժիշկ.

Հեկուց. էգուց.

Հեռ. քէն, ոխ.

Հէշի. սէր, տենչ, փափագ.

Հէքան. յետոյ, միւս.

Հլլա. այժմ, արդ.

Հորտեղ. որտեղ.

Հուր. ուր.

Հուքմ. հրաման, իշխանութիւն.

Հօան. ընդհանուր տեսարան. գեղեցկութիւն.

Հօրս. մինչև այսօր.

Չ

Չէն կամ ձին. ձայն.

Չիք. երկայն.

Չուն. ձիւն.

Ղ

Ղարդ. ստացադիր.

Ղարուլ անել. ընդունել, համաձայնել.

Ղաղամ. հին, վաղեմի.

Ղաղալել. Թառամել, Թօշնել.

Ղաթար. ջորի. այնքան, շարք.
Ղաթի. սղութիւն, թանգութիւն.
Ղալը. կեղծ, խարդախ.
Ղալէ. բերդ, ամրոց.
Ղալաղել. սխալել.
Ղալմալ. աղմուկ.
Ղամ. վիշտ, մտմտութեւ, ցաւ.
Ղամայ. հոգս, մտածմունք. դա-
շոյն.

Ղամար. կամար, լուսին.
Ղամբար. թանաքաման.
Ղամիշ. եղէգ.
Ղանաթ. առու.
Ղասար. հասակաճառ.
Ղարար. հանգստութիւն, անդոր-
րութիւն, որոշում.
Ղարիւ. պանդուխտ, օտարա-
կան.
Ղարու. մտածողութիւն.
Ղափչի. պահապան.
Ղգար. հազար.
Ղէրազ. աղանդներ.
Ղուի. կակուղ փետուր, բմբուլ.
Ղուլ. ստրուկ, ծառայ, գիրք.
Ղուսայ. հոգս, մտածողութիւն,
վիշտ, թախիծ.
Ղրայ. եզր, կողմ, սահման.
Ղօռովայ. շիշ.

Ճ

Ճար. դարման, դեղ, հնար.
Ճարմակ. ճերմակ, սպիտակ.
Ճարում. ճանկում, ճեղքում.
Ճոթ. կտոր, գործւածք, զգեստա-
ցու.
Ճրաք. ճրագ.

Մ

Մաթ. զարմացած, ապշած, հիա-
ցած.
Մաթլար. պահանջ, խնդիրք, նը-
պատակ.
Մալ. ապրանք, գոյք, ինչք.
Մալհամ. սպեղանի.
Մախ. մահ.
Մահալ. տեղ, վայր, գաւառ,
փողոց.

Մահակ. փորձաքար.
Մահանայ. պատճառարանութիւն
առիթ.
Մաղուլ. լաւ, համեօտ, հան-
դարտ.
Մաղրուր. հպարտ.
Մանան. մանանեխ.
Մանգար կամ մանգուր. տեսարան
Մանէ. իմաստ
Մաշ. ընդդէմ, լուրիւ.
Մասապ. կրօն, տաղանդ, հա-
ւատք.

Մասիլ. բերք, ընդհանրապէս հա-
ցարոյս և ընդդէմ.
Մասլահաթ. խորհուրդ.
Մարթ. մարդ.
Մարդումի. մարդկանց.
Մարիֆաթ. շնորհք, գիտութիւն.
Մաֆար. կարողութիւն.
Մգամ. միթէ.
Մեխկ. մեղք.
Մէլ. հաճոյք, կամք, միտքարու-
թիւն.

Մէհման կամ մէհմար. հիւր,
Մէհնա. մահանայ, կեղծիք.
Մէհնաթ. նեղութիւն, տանջանք.
Մէհրէբան. սիրելի, կաթողին.
Մէյնդան. հրապարակ, բաց և
ընդարձակ տեղ.
Մէջլիս. խնճոյք, հանդէս, ժո-
ղով.

Մէր. մայր.
Մէրէվան. ըղձակաթ, սիրելի.
Մէք. մի.
Միւէ. պտուղ.
Միւրել. կնքել.
Մնաթ. խնդրւածք.
Մոկարխանէք. հարս ու փեսայի
հետ գնացող բարեկամներ.
Մոհաթիլ. հարկահան, սուրհան-
դակ.

Մոնասիլ. խնդրակ, ուսիական.
Մոնչում. ոչ որի.
Մոչինչ. ոչինչ.
Մուհասիպ. ծանօթ, մերձաւոր.
Մուղալաթ. խեղկատակ, ծաղ-

րածու, կատակերգակ.
Մուղարար. անընդհատ, շարու-
նակ, մշտապէս.
Մուղլսի. ժամկոչ, ժամահար.
Մուշտարի. յաճախորդ, գնող.
Մուռտար. պղտոր, կեղտոտ.
Մուստարաթ. կեղեքում.
Մուրախաս անել. արձակել.
Մուքէլ. Միքայէլ.
Մոջան. բուստ, մարջան.
Մօհրադ. սէր, պատիւ, յար-
գանք, մեծարանք.
Մօհր. կնիք.
Մօտկանալ. մերձենալ.
Մօրվաթ. պթութիւն, խիղճ.

Յ

Յեկնային. երկնային.
Յեփօր. երրորդ.
Յիմաման. իմանում.
Յորտեղ. որտեղ.
Յուշեար. զգոյշ.
Յուշունց. հայնոյեանք.
Յուջաթ. պարտամուրհակ.
Յօլլա անել. ոտնատակ կոխատել

Ն

Նադան. անշնորհք, յիմար.
Նազ. նազանք.
Նազար. չար աչք.
Նազլու. նազ անող, նազելի.
Նալաթ. նախատինք, անէծք, նը-
զովք.
Նահախ. անիրաւ, ունայն տեղ.
Նաղաջար. հասարակ նկարիչ,
ծաղկանկար.
Նաղդ կանխիկ.
Նամաղուլ. սխալ.
Նամարդ. տմարդի, ապաշնորհ.
Նաչաղանալ. տկարանալ, հիւան-
դանալ.
Նաջուշ. եռանալ.
Նաս. ձախորդութիւն, անյաջող.
Նասադ. տկար, պատիժ.
Նգար. մերժում.

Նե. ներս.
Նեռ. փոխաբ. մտքով դաժան, չար.
Նսուն. իննեսուն.
Նշտար. նշտրակ, երակահատ.
Նով. նոր.
Նստման. նստում.
Նօվքիսայ. նոր փող աշխատող.
Նօքար. ծառայ, սպասաւոր.

Շ

Շայ. Տ կողմէկ.
Շամա. արև, արեգակ.
Շանվարի. շան պէս.
Շառ. ձախորդութիւն, փորձանք.
Շառակ. երակ պարանոցի.
Շաթթ. գրազ, պայման.
Շատաման. շատանում.
Շարմ. ամօթ.
Շիլանալ. խենթանալ.
Շիր. առիւծ.
Շլինք. վիզ.
Շոք. տաք, տօթ.

Ո

Որում. չարութեան սերմ, դառ-
նիւծ.
Ումրիւր. կեանք, արև.
Ումիդվար անել. յուսադրել.
Ումուդ. յոյս, ապաւէն.
Ուր. իր.
Ուսուլ. զգուշութիւն, հնարա-
գիտութիւն.
Ուսուլուլ. գաղտնի, կամացուկ.

Չ

Չամբերեն. չհամբերեն.
Չարվադար. ձիապան, ջորեպան.
Չափաւատ անել. աւերել.
Չիգին. կարի տեսակ.
Չիման. արօտատեղի, մարգարէ-
տին.
Չիր. չէիր.
Չնի. չինի.
Չոք. չորս.
Չուղուլ. նախանձոտ.

Զուգ. ինչու.
Զուգքի. որովհետև, ինչու որ.
Զուգ. մինչ, մինչև.
Զոր. չոր.

Պ

Պաշտումախակալաշտօնեաներից.
Պաշ. համբոյր.
Պնչի. քնթի ծակեր.
Պուճախ. անկիւն.
Պոճնել. ազատել, մեռնել.
Պոճուցանել. վարջացնել.

Ջ

Ջարրի. բռնի, հարստահարութիւն.
Ջաղայ. պատիժ, տանջանք.
Ջահանդամ. դժոխք.
Ջահէլ. երիտասարդ.
Ջայրջայ. տեղաւորել.
Ջան. մարմին, անձն.
Ջանէմարկ. անձնադիր լինել.
Ջաւ. մուկեմիկ.
Ջառթէլ. կոտորել. ջարդել.
Ջաւղ. ընկոյղ. կակալ.
Ջաւահիր. գոհարեղէն. ակունք.
Ջէք. գրպան.
Ջխուգ. հրէս.
Ջլար. սանձ.
Ջնջալ. ցաւ.
Ջոկէլ. բաժանել.
Ջորեք. չորս.
Ջուխտ. զոյգ.
Ջուհար. փայլ.
Ջումիաթ. ժողովուրդ.
Ջուշ. բարկութիւն, եռանդ.
Ջոնգուռ. աշուղների նւագարան.
Ջոռաթ. համարձակութիւն, սիրտ անել.

Ռ

Ռակ. տաժար, երակ.
Ռահաթ. հանգիստ, խաղաղ, գեղ-
ջուկ.
Ռաստայ. ուղիղ, ճիշդ.

Ռէհան. կանաչեղէն.
Ռուզիգար. կենցաղավարութիւն
Ռուսխաթ. արձակուրդ, արտօ-
նութիւն.

Ս

Սարաէնց. առաւօտեան.
Սադայ. միայն, միմիայն. ան-
խառն, զուտ, պարզ.
Սաղ. յարմար, պատշաճ. աշուղ-
ների նւագարան.
Սաղանդար. երաժիշտ. սաղ, դար,
զուռնա և ուրիշ նւագա-
րան ածող.
Սաղվել. յարմարել.
Սաթ. քահարիբար.
Սահար. տէր.
Սահարքար. տէր, տիրական.
Սանթանաթ. նիստ ու կաց. տան
սարք.
Սապր. համբերութիւն.
Սառաֆ. սեղանաւոր.
Սալզ. կանանչ.
Սալորել. սովորել, ուսանել.
Սարգէրդան. շւարած, մտահոգ.
ապշած.
Սարդար. փոխարքայ, մեծ իշ-
խան.
Սարվան. ուղտապան.
Սաֆ. հարթ,
Սաֆաթ. պարզ.
Սաֆար. ճանապարհորդութիւն.
Սէֆիլ. խեղճ, տարակուսել.
Սինի. կուրծք.
Սղուլ. սխալ.
Սուլուկ. վարսակ, կորեկի ստոր
տեսակը.
Սոււն. սիւն.
Սուսամբար. անուշահոտ բոյս.
Սուրաթ. դէմք, երես, պատկեր,
կերպարանք.
Սօհրաթ. քաղցր զրոյց.
Սօվդայ. առեւտուր, սակարկու-
թիւն.
Սօվդագար. վաճառական, ճանա-
պարհորդ.

Սօր. այսօր.
Սօրաղ. հարցութորձ.

Վ

Վադայ. ժամադրութիւն.
Վախման. վախենում.
Վասիլ. դժոխաց բաժին.
Վասվաս. փոփոխամիտ.
Վարավուրդ անել. դիտել, զննել,
խորագնին աչքով նայել.
Վարթրաւ անել. ոչնչացնել, վեր-
ջացնել.
Վէզիր. նախարար.
Վոաղել. աճապարել.
Վիրիվ. վերի.

Տ

Տալման. տալիս.
Տակախան. տակից, խորքից,
գաղտուկ.
Տամար. երակ, զարկերակ, ջիղ.
Տարէն. տարին.
Տկալ. տքալ, հարած.
Տօմար. գիրք, թուղթ, տօնացոյց

Փ

Փալվան, ըմբիշ, հօտեմարտիկ.
Փանրադուն. բամբակի կուտ.
Փաշայ. տաճկական իշխան, մեծ,
գլխաւոր, պետ.
Փանդանել. յարձակել, պա-
տառել.
Փանջարա. պատուհան, լուսա-
մուտ.
Փաչէք. երկու աղդիր միջոցք, շէք
Փապչկար. հողաթափ կարող.
Փառ. փայլ.
Փասանդ. հաճոյ.
Փաստայ. հերթ.
Փաքաքարայ. մաս մաս, պա-
տառ պատառ.
Փարդով. ծածուկ, երկդեմի.
Փարթուել. ձգել.
Փաքամ. երկիւղ.
Փաքար. հարկաժողով.

Փաքիզայ. ժաքուր, յստակ.
Փէշակ. արհեստ.
Փէտ. փայտ.
Փէրիա. Սպահանի ամենամեծ
հայաշատ գաւառը.
Փէրիշան. խառնաշփոթ, խեղճ,
թշուառ.
Փիշուատ. կանխահապ տուղ.
Փոզ. դրամ.
Փոշմանել. գղջալ.
Փրի կամ փիր, հաւատ, կրօն.

Ք

Քալանթար. գիւղի առաջաւոր,
գլխաւոր, ծեր.
Քաղաթ. թուղթ.
Քամար. կամար, գօտի.
Քարգադան. ոնգեղջիւր.
Քարդէքար կամ քէրդքար. ա-
րած դործ.
Քաֆուր կամ քաֆէր. անհաւատ.
անիրաւ, անգութ.
Քե. քեղ.
Քէթխուդա, թաղապետ, գիւղի
իշխան.
Քէֆօվանալ. հարբել.
Քթար. գիրք.
Քինչ. քան թէ.
Քոխք. քաղցր.
Քուչէ. փողոց.
Քուֆր. հայհոյեանք.
Քրմակ. կանանց գլխի զարդ.
Քօմակ. օժանդակ, օգնական, օգ-
նութիւն.
Քօռ. կոյր.
Քօռացնել. կուրացնել.
Քօք. արմատ.

Օ

Օթախ. սննեակ.
Օխց. օձ.
Օր. որ, զի.
Օրդու. բանակ.

Ը

Ծալ. դարձնկեցութիւն. գնչու-

հիների՝ այլ և այլ ձևով տ-
րած գուշակութիւնները.
հմայութիւն.
Ֆալս. կեղծ
Ֆաղիր, աղքատ, խեղճ.

Ֆիլքը. մտածմունք, հոգս.
Ֆրիաթ. աղաղակ.
Ֆրսաթ կամ ֆօրսաթ. յարմար
բոլոյէ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
1. Աշուղ Բաղէր օղլու կեանքը	1
2. Երգերը	1
3. ԺԸ. դարի քաղաքական անցքերը	1
4. Պատմական երգեր	3
5. Խրատական—բարոյական	4
6. Սիրային	5
7. Երգիծական	7
8. Լեզուն	8
9. Ընդհանուր հայեացք	8
10. Բաղէր օղլու երգերը	9—30
Ա) Պատմական	9—16
1. Խաղ հարստահարութեան Նաղիր Շահի	9
2. Խաղ թիւն ճԼԱ	11
3. Խաղ վասն աւերածոյ Զուղայու	12
4. Խաղ վասն նեղութեան Զուղայու	13
5. Խաղ վասն Նաղիր Շահի օպանման	14
Բ) Խրատական—բարոյական	17—19
1. Աղամայ որդի	17
2. Ե՛կ իմ անդադար սիրտ	18
Գ) Սիրային	20—24
1. Էդքան գեղեցկութիւն	20
2. Քո սէրն	20
3. Ա՛յ թէ փախաւ	21
4. Պնայի դիւրարս տեսնեմ	22
5. Ասի. դիւրար	22
6. Ասի. նազլու դիւրար	23
7. Կշտօվս յանց աս կալման	24
Դ) Երգիծական	25—26
1. Էլս տեսէք	25
2. Հակագրութիւն	25

6)	Միւս երգերը	27—30
1.	Առաջին և երկրորդ պատկ	27
2.	Տաղ Զուղու	28
11.	Աշուղ Ղուլ Արզունի	31—33
Ա)	Պատգանդներ Արզունու երգերից	33—40
1.	Մեղայ Տէր	33
2.	Ղարիբ տեղ նաչաղ ամ	35
3.	Մեր ասկն	35
4.	Գրիչ	38
5.	Սուտ բարեկամ	39
12.	Ղուլ Սարգիս Շրիշկանցի	41
1.	Եկէք երկու բան ամ ասում	41
13.	Միսկին Ստեփան	43
1.	Աղաչեմք մեր Սանդժողից	43
14.	Տաղ Ղուլ Թովաննէսի (Թաւելւած)	43
15.	Բառարան	45—54

100 for one year will be = $\frac{120}{100} = 1.20$
 $\frac{120}{100} = 1.20$
 $\frac{6}{5}$

in for £150 = $\frac{150}{100} = 1.50$
 $\frac{150}{100} = 1.50$
 $\frac{12}{5}$

3 - 197
 $\frac{3}{5} \times 197 = 118.2$
 $\frac{100}{5} \times 73 = 1460$
 $\frac{197}{5} \times 73 = 2867.4$

9 x 197 = 1773
 $\frac{197}{5} \times 73 = 2867.4$
 $\frac{197}{5} \times 73 = 2867.4$

197
 $\frac{197}{5} \times 73 = 2867.4$
 $\frac{197}{5} \times 73 = 2867.4$

6 x 3000 = 18000
 $\frac{6}{5} \times 3000 = 3600$
 $\frac{6}{5} \times 3000 = 3600$
 $\frac{6}{5} \times 3000 = 3600$

Իմ աշխատությունները

Ղառն

- 1) Նոր-Ջուղա (սպառում) 6
- 2) Սպահանի Փէրիա դաւառը (սակաւաթիւ) 8
- 3) Աշուղ Յարթին օղլի, Ա. պրակ (սպառում) 4
- 4) Պարսկահայ աշուղներ-Ամիր օղլի, Ղուլ Էգազ և
Աբդին օղլի, Բ. պրակ (սպառում) 4
- 5) Պարսկահայ աշուղներ-Բաղէր օղլի, Ղուլ Արզունի,
Ղուլ Սարգիս Շրիշկանյի և Միսկին Ստեփան, Գ. պրակ 4
- 6) Իգէալիստը (պանտոմիմա) 1

Պատաս ևն սպագրութեան

- 1) Աշուղ Ալլահվէրդի
- 2) Աշուղ Ղուլ Յովհաննէս
- 3) Տէր-Կարապետ Օհանեան
- 4) Երզնի Մարտիրոս Մանուկեան
- 5) Հատ ու կտոր փշրանքներ Ջուղահայ և Հնդկահայ բանահիւսութիւնից.
- 6) Չահարմալի ժողովրդական բանահիւսութիւնը.

ԱԻՕ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒԴԱ

ԳիճԳ Է 4 դրան

Գիմել



